

# ԻՆՉՈՒՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՈՒՄԻ ՄՇԱԿՈՒՅԹ...

Ողջ պատմության ընթացքում մեր ժողովուրդը Հայկական լեռնաշխարհում միշտ պահպանել է իր մշակույթի շարունակականությունը, ինչը, դժբախտաբար, չես ասի պետականության նաև:

Առաջինի շնորհիվ մենք պահպանել ենք մեր հոգևոր-մշակութային արժեքներով:

Թվում եր, թե հայոց պետականության վերահաստատումից հետո մեր հայրենիքում պետք է վարեինք ազգային-մշակութային քաղաքականություն: Բայց, ցավոք, այսօր սառնասրտորեն, առանց խոյնի խայրի փոշիացնում ենք այն ամենը, ինչը սրբությամբ, աչքի լույսի պես պահել, պահպանել ենք հայոց պետականության բացակայության պայմաններում:

Միայն Արցախի ազատամարտի շնորհիվ կարողացանք դրանց մի չնչին մասը վերադարձնել: Հարթեցինք այդ պատերազմում ծանր զոհողությունների գնով, սակայն ապրում ենք պարտվածի հոգերանությամբ: Ավելիհ՝ ոչ միայն լիարժեք չենք բնակեցնում մեր ազատագրած տարածքները, այլև դատարկում ենք մեր այս «մի պտղունց» երկիրը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Սրանք հարցեր են, որոնք պետք է քուն ու դադարից գրկեն մեր ողջ ժողովորդին, առաջին հերթին՝ երկրի (պետության) աշխարհիկ ու հոգևոր առաջին դեմքերին...

Անհեթերություն չէ՝ անկախ պետականության պայմաններում խոսել ու զբաղվել հայապահպանության, հայահավաքի, ազգային դիմագծի, ավանդությունների և հոգևոր այլ արժեքների պահպանան գերխնդիր դարձած հարցերով, երբ այնքան չլուծված ազգային հարցեր ունենք մեր երնիկ միատարր հանրապետությունում... Եթե պետք է շարունակենք մեր բոլոր բացքողումներն ու դժբախտությունները բացատրել հայոց պետականության վեցդարյա բացակայությամբ և եղած սխաներին նոր վխաներ ավելացնել, մենք երբեք չենք հասնի մեր փայփայած գաղափարների իրագործմանը և կշարունակենք (ինչպես երև և է) սեփական անհաջողությունների համար մեղադրել այլոց:

Ինչ խոսք, եթե մենք ունենայինք ազգային գաղափարախոսություն և վերջինիս հիման վրա՝ ազգային զարգացման ծրագիր, մեզ համար շատ ու շատ հարցեր հստակ կլինեն: Օրինակ՝ ինչպիսի՞ պետություն ենք ուզում կառուցել՝ ազգայի՞ն, որին զգտել ենք մեր ամբողջ պատմության ընթացքում, թե՞ աշխարհաքաղաքացիական այսօրվա զարգացումներով թելադրված՝ ձևով համանարդկային, բովանդակությամբ՝ պազարված մի ինչ-որ կառույց: Եվ ըստ այդ՝ կհստակեցնեինք մի շարք ածանցյալ հարցադրումների պատասխաններ՝ ինչպիսի՞ հասարակություն ենք ուզում ստեղծել, և ի՞նչ խավերից պետք է բաղկացած լինի այն: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր տնտեսությունը: Ռազմական, տնտեսական, սոցիալական, հոգերանական, մշակութային ինչպիսի՞ պաշտպանություն է մեզ պետք: Ի վերջո, ազգային անվտանգության ինչպիսի՞ հայեցակարգ է մեզ պետք, որպեսզի մեկրնդիշու վերջ տրվի արտերկրի ամեն տեսակի ու գույնի հոսանքների և սրանց տեղացի՝ հայանուն կամակատարների՝ մեր ժողովորդին փորձագիտական «հումքի» վերածելու հրեշավոր նկումներին:

Սրանք արմատական հարցեր են, որոնցով պետք է զբաղվի միայն ու միայն պետությունը: Անսագիր կամ նտավորականների մի խումբ պարտավոր չեն և չեն էլ կարող ստանձնել պետության գործառությութեա: Բայց քանի որ օտար ներքահանցումների (և այն էլ՝ անարգել) պայմաններում այսօր բազմացել են մեզ ամեն ինչ «սովորեցնողներն» ու «փրկիչները», փորձում ենք պահպանել մեր ընթերցողների զգոնությունը, այլապես այսօրվա գաղափարական քառոսի պայմաններում շատ բան և վերջնականապես տանուլ կտանք՝ օտար բառով ասած՝ դառնալով «մանկություն»: Իսկ դրա իրավունքը մենք չունենք: Մեր նախնիները դրա համար չեն մեզ ժամանգել մեր հայրենիքը, մեր մշակություն ու պատմությունը...

Հասարակությամբ պետք է ուղղորդի գիտակից և ակտիվ մտավորականների խավը՝ թեկուզ փոքրաբիկ (որպես կանոն՝ ճրանց միշտ մատների վրա են հաշվում): Նրանց ձայնը պետք է մշտակես լսելի, հասանելի լինի հասարակության բոլոր շերտերին: զանգվածներին՝ իբրև սրբիության և խոհեմության կոչ, իսկ իշխանական լծակներին տիրապետողներին՝ իբրև ահազանգ և զսպաշապիկ: «Ծրջադարձը» նաև ննտավորականների խոսափողն է:

Մեր հասարակությունը բևեռացված է: Դա բոլորը գիտեն: Ուսիի համեմատական կերպով բևեռացվել է նաև մեր ազգային հոգերանությունը: Դա հատկապես նկատելի է երիտասարդության շրջանում: Նրանց մի զգալի մասն անաշչում է իր ազգային պատկանելության համար և կապկում արևելյան կամ արևմտյան, մեզ համար օտար և անընդունելի բարքերն ու կենսակերպը, զուգահեռաբար՝ դրսից թելադրված «արվեստները»: Երիտասարդների մի զգալի մասն էլ տառապում է ազգային սնապարծությամբ, որովհետև վարակված է ազգային գերարժեքության բարդույթով:

Մեր ամսագրի նպատակներից մեկն էլ ազգային արժեքներ կրող սերունդ դաստիարակելն է: Գլոբալացման այսօրվա հարահոսում մենք պետք է հստակեցնենք, բյուրեղացմնենք մեզ համար ամենաառաջնահերթ՝ ինքնապահպանման խնդիրը մեր երկրում, մեր տանը և հետո միայն, որպես ձևավորված ազգ ու պետություն, փորձենք ներկայանալ աշխարհին: Թե չէ ի՞նչ է ստավում՝ ամբողջ էնթրամբ ձգվել ենք դեպի Եվրոպա՝ ժամանակավորն ու հավիտենականն իրար խառնած, ժամանակավեպն ու ժամանակի պահանջը չհասկացած: Օտարներից վերցրած ամենալավ օրինակներն անգամ պարտավոր ենք անցկացնել մեր պրիզմայով, մարսել, հայացնել, հետո միայն մատուցել ժողովորդին:

ԽՐԱԺԴՐԱԿԱՆ

ՀՐԱԺԴՐԱԿԱՆ

# Ծնունդի շնորհավոր, «ԾՐՁԱՂԱՌՁ»

Պատահիկներ՝ շնորհանդեսից

Յունիսի 12-ին «Վերածննդի համախմբում» հայրենասիրական հասարակական կազմակերպության մեջ դահլիճում տեղի ունեցավ «Ծրչադարձ» համահայկական ամսագրի շնորհանդեսը:



Գևորգ  
Ֆազլյան



**Հրաչիկ Սիմոնյան,** պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - «Ծրչադարձ» շառայունով մտավ հասարակական կյանք: Կարծում են՝ այն օրեցօր նորանոր բարձունքներ պետք է նվաճի: Այդ հավատն ամրապնդում է նրա պրոֆեսիոնալ խմբագրակազմը: «Ծրչադարձ» մեջ հաջողություն պետք է ունենա նաև այն պատճառով, որ նրա հիմնադիրները չափազանց բարոյական մարդիկ են, և նրանց վարքագիծը մշտապես արտացոլվելու է հանդեսի եցերում: Թող հավերժի «Ծրչադարձ». այն մեր ժողովրդին շատ է պետք: Կցանկանայի՝ խմբագրակազմի նշանաբանը լիներ՝ «Բարոյականություն»:



Զախից առաջինը՝ Հասմիկ Գուլակյան

**Արևատ Ավագյան,** Մշակույթի հայկական ֆոնդի նախագահ, բանաստեղծ, Անկարիչ - Շատ ուրախ եմ, որ «Ծրծադարձ» շուրջ համախմբված են այնպիսի մարդիկ, ովքեր տարիների ընթացքում մշտապես ցույց են տվել իրենց ազգային, մարդկային, բարոյական նկարագիրը: Բարոյականությունը պակաս մարտնչող և արդյունավետ է դառնում, եթե նրան չեն գումարվում մարդկային կամքի, նպատակամովածության և ցանկալի արդյունքի հասնելու մյուս հատկանիշները: «Ծրծադարձ» խմբագրակազմի նիզախությունը բացառում է որևէ նահանջ:

«Ծրծադարձ» գինվոր է, որ մշտապես հսկելու է ոչ միայն մեր սահմանը, այլև մեր տունը, փողոցը, ընտանիքը... Կուգենայի, որ «Ծրծադարձ» առաջին կարգախոսը լիներ. «Պահենք, պահպանենք մեր ինքնությունը և գնանք վերընթացի ճանապարհով»:



**ՍամՎել Իսկանդարյան,** բանասիրական գիտությունների թեկնածու, «Գլածոր» կառավարման համալսարանի դոցենտ - Ինձ համար մեջ պատիվ է տպագրված հոդված ունենալ «Ծրծադարձում», ամսագիր, որ իրոք համահայկական է, որտեղ չկան տեղացի-դրսեցի բաժանումներ: Շատ է ուզում, որ հայ և համաշխարհային գրականության առնչակցության հարցերին նվիրված իմ հրապարակումը տարածվեր աշխարհով մեկ: Այսօր ես շատ ավելի ուրախ եմ, որ ամսագրի ռուսերեն և անգլերեն համառոտ տեղեկատվության շնորհիվ, ի թիվս մյուս արժեքավոր հրապարակումների («Ծրծադարձ» նյութերն այլ կերպ չեն անվանի), այն ներկայացվեց նաև օտարալեզու ընթերցողին:

**Ուաֆայել Ղազարյան,** ՀՀ ԳԱԱ ճարտարագիտական կենտրոնի տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - Երբ աղանդերը քայլացում են մեր հոգևոր աշխարհը՝ ջանալով, որ հայր կորցնի իր ազգային պատկանելության գգացումը, երբ ՀՀ-ում ստեղծված սոցիալական ծանր ու դժվար կացության պատճառով մեր ժողովրդի գրեթե կեսը հեռացել է Հայրենիքից և դեռ հեռանում է, շատ անհրաժեշտ էր շաղկապող հանդեսի ի հայտ գալը, պարբերական, որ գուցե նպաստի արտագործի կասեցմանը, հայրենիքի նկատմանը պարտքի գգացում արթնացնի արտերկիր մեր հայրենակիցների մեջ և, ի հեճուկս սոցիալական դժվարությունների, մեր որդիներին մեզ վերադարձնի: Այդ իմաստով մենք չենք կարող չգերազանահատել այս ամսագրի նշանակությունը: Խմբագրակազմը նման հույսեր մեզ ներշնչում է:


**Արմեն Ավետիսյան,** Դայ Արիական Միաբանության առաջնորդ - Լուժարելով Ազգային ռադիոյի արտասահմանի հայության համար տրվող հայերեն հաղորդումների բազմայա խմբագրությունը՝ ռադիոյի «ղեկավարներ» մտածեցին, թե Հասմիկ Գուլակյանին մեկուսացրին մեր պայքարից: Հասմիկը միշտ «դիրքերում» է: Նա այն հայուիներից է, որոնց առաջ են՝ որպես հայ տղամարդ, որպես հայ ազգի նախնյաց հետմորդ, գլուխ են խոնարհում: Հասմիկ ջան, ես շատ ուրախ եմ, որ դու «Ծրծադարձում» պիտի շարունակես ծառայել մեր ազգին և այնպիսի նվիրումով, ինչպիսին դու ունես և կարող ես:

Գևորգ ջան, շնորհավորում են նաև քեզ: Մենք համատեղ աշխատում ենք հայ ազգային, քաղաքական դաշտում և գենետիկ հաճույք են ստանում այդ համագործակցությունից: Այն մակարդակը, պոռթկումը, նվիրումը, որ դու դրել ես թե՝ սփյուռքում, թե՝ ՀՀ-ում, անփոխարինելի է:

Այս հանդեսը մեջ առաքելություն ունի, իսկ այդ առա-

քելության մեջ մենք՝ բոլորս, ունենք մեր պարտքն ու պարտականությունը:

**Արտեմ Օհանջանյան**, պատմաբան, կիմորեմադրիչ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր (Ավատրիա) - Ծառ հետաքրքիր նյութեր են կարդացել «Շրջադարձի» համարներում: Այն գործը, որ դուք ձեռնարկել եք, անշափ կարևոր է և սփյուռքի համար, և ՀՅ-ի: Մինչ այժմ սփյուռքում չեմ տեսել ննան ընդգրկում ունեցող իրոք համահայկական պարբերական, որի մեջ ասվեր այն ամենի մասին, ինչ կատարվում է ՀՅ-ում: Իր գաղափարական ուղղվածության առումով ննան պարբերական-ների կարիք մենք շատ ունենք դրսում:



**Տիգրան Փաշարեզյան**, «Վասն հայության» հանդեսի խմբագիր - Ազգային մշակութային արժեքները ձևավորում են ազգային ինտելեկտուալ դաշտ, իսկ գրավոր խոսքը, մանավանդ՝ մամուլը, ազգային-հասարակական մտածողության դրսուրում է: Այսօր վա մեր մանուլը հաճախ չի նպաստում ազգային-հասարակական մտածողության կերտմանը: Դատելով «Շրջադարձի» առաջին համարների նյութերից՝ կարծում են, որ այն ընտրել է մեր լեզվի երկու ճյուղերի արտահայտման լավագույն ձևը: «Շրջադարձ» կարող է ձևավորել ազգային, հասարակական, գրական լեզվամտածողություն: Այս ամսագիրն առաքելություն ունի մեր ազգին ու հասարակությանը դեպի հաղթանակ առաջնորդելու:

**Ներենիկ Վարդումյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության հնատիտուտի ազգագրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր - «Շրջադարձ» որդեգրել և արտահայտում է հայապահպանության, հայահավաքի ազնիվ գաղափարներ: Չենք կասկածում նրա հաջողությանը, որովհետև հանդեսի սնարի մոտ կանգնած են ազնվագույն, բարոյական եզակի նկարագրի տեր մարդիկ:

Դասմիկին ճանաչում են «Վասն հայությունից». ի՞նչ հյուսակապ գործ է կատարում նա այնտեղ: Իսկ Գևորգը գիտնական է, հրապարակախոս, արտակարգ գրասեր մարդ: Նա հայրենիքը և սփյուռքը կապող օղակ է:

«Շրջադարձ» շատ բարի և ազնվագույն գործ է կատարելու հայ հասարակության համար:

**Ողովալիա Գաբրիելյան**, պատմական գիտությունների թեկնածու - Երկար տարիներ աշխատել են մամուլում, հասկապես՝ «Ազգ» թերթում: Անկեղծորեն խոստովանում են, որ հոգնել են քաղաքականացված մամուլից, թեև միշտ գրել են այդ թեմայով: Ինձ թվում է, որ «Շրջադարձ» լավ հիմքերի վրա է և ապագա կունենա, որովհետև ուղղված է ոչ թե որևէ քաղաքական հոսանքի, այլ ողջ հայությանը, ընդ որում՝ անկախ այն բանից, որտեղ են ապրում: Դա մեծ համբավ կրերի ամսագրին: «Շրջադարձ» գործունեությունը ես համարում եմ գործունեություն՝ հանուն Յայրենիքի:

**Սարգիս Մուրադյան**, Հայաստանի ռադիոյի արտասահմանի հայության համար տրվող հաղորդումների նախկին գլխավոր խմբագիր - Լավ կլիմեր, եթե ամսագրի կարևոր հոդվածները հակիրճ թարգմանվեին այլ լե-

զուներով և տպագրվեին հավելվածի ձևով: Ցանկալի է, որ «Շրջադարձ» ունենար նաև մանկական էջ, անդրադառնար մեր մարզերի կյանքին:

Ամսագրից համահայկական է, իսկ արտասահմանյան հանդեսներն այսօր շլացնում են իրենց ձևավորմանը: Ծառ կուգենայի, որ «Շրջադարձ» ուշադրություն դարձներ այդ հանգամանքի վրա, որպեսզի կարդանա դիմանալ մրցակցությանը:

Ուզում եմ, որ «Շրջադարձ» անդավաճան լինի իր սկսած գործին: Մաղթում եմ ճշմարիտ տեղեկատվություն, աննահանջ առաջընթաց և միշտ լինել պատմեշի վրա:

**Նվարդ Բորյան**, հեռուստալրագրող - Զափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ ինչպես երեսուն տարի առաջ Գևորգեն Յանիկյանի կրակոցներն արթնացրին մարդկության քնած խիդը և մեր ժողովողի թրած միտքը, այնպես է այսօր «Շրջադարձը», որպես այդպիսին, մտորելու առիթ է տալիս մեզ՝ ո՞վ ենք մենք, ո՞ւր ենք գնում, որտեղ ենք հիմա և ո՞րն է մեր նպատակը: Իսկապես որտեղ ենք մենք հիմա: Իմ կարծիքով՝ «Շրջադարձ» ոգու դաս է, ազնիվ ապրելու, հայ մնալու ճշմարիտ դաս: Սա հայ մարդու համար իսկական լույս է ու փարու: Շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր հղացել են այս ամսագրի գաղափարը: Շնորհավորում եմ նրա խմբագրակազմին: Կարծում եմ, որ հայության հոգեւրով ապրող յուրաքանչյուր ոք ճանաչում է նրանց՝ որպես իսկական հայ մարդիկ, որպես պրոֆեսիոնալ լրագրողներ: Նրանք ինձ համար ազգանվեր մարդու իդեալներ են: Նրանց գաղափարներն ու կենսակերպը փոխանցվել են այս իրենց ամսագրին: Ծառ կցանկանայի, որ մեր շատ լրատվամիջոցներ քաջալրվեն Գևորգի և Յամիկի օրինակով, խիզախություն դրսուրեն և ինչ-որ չափով հետևեն «Շրջադարձին»: Այնտեղ հայ մարդու ցավն է, տագնապը, նաև ահազանգ՝ հայապահպանության և հայ մնալու, «միաժամանակ» հույս է ու հավատ՝ մեր ուժի, մեր հաղթանակների նկատմամբ:



**Գագիկ Գինոսյան**, «Մահապարտների» ջոկատի X կործանիչ դասակի անդամ, «Կառուի» ազգագրական երգիպարի խմբի հիմնադիր և գեղարվեստական դեկանար՝ Շնորհակալություն ձեզ՝ ձեր կատարած աշխատանքի համար: ՀՅ-ում մենք մանուլ շատ ունենք, հատկապես՝ ավելորդ: Ձեր պարագայում, փառք Աստծո, հայտնվել է մի մանուլ, որը փարվել է ամեն մի ազգայինին: Ես շատ քննադատական վերաբերմունք ունեմ մանուլի աշխատողների նկատմամբ: Նրանց մեջ մասը նույնիսկ հարյուր տոկոսանոց դրական երևույթի մեջ միշտ ինչ-որ բան է փնտրում, որ քննադատի: Ասում են՝ մոլախոտ ենք հանում... Մոլախոտ հանելը թիչ է: Պետք է բերի աճեցնել: «Շրջադարձում» այնքան պարարտանյութ կա՝ ազգային ամեն ինչ աճեցնելու համար...

Ինչպիսի գլոբալիզացիա էլ որ գա, ձեր նման հայերի հետ անհնար է կորցնել Յայրենիքը: Ձեր նմաններով ազգը կմնա հարատւ:

Շնորհակալություն՝ ձեր նվիրումի համար:

**Նորայր Մուշեղյան**, օլիմպիական չեմպիոն, «Զորա-

**Վար Անդրանիկ» միության նախագահ - Հայաստանը ծանր կացության մեջ էր, երբ Զորավարը իմնադրեց «Հայաստան» թերթ՝ ժամանակի ցավն ու ողին արտահայտելու, ժողովրդին բնիփրից հանելու և կյանքի կոչելու համար: Նույնը կարելի է ասել «Շրջադարձի» մասին:**

Ինձ համար շատ հարազատ անուններ, նվիրյալ հայորդիներ են իմնադրել «Շրջադարձ»՝ շրջադարձ ակնկալելով հայոց վարքագիր մեջ և ՀՀ-ում, և սփյուռքում:

Թող Զորավարի օրինանքը լինի ձեր վրա:



**Կարեն Թոխասյան, աստղաֆիզիկոս, ժայռապատկերաբան - Ծնորհավորում են այս երկամսյա, բայց արդեն հասուն ամսագրի ծնունդը և մաղթում հաստատում ընթացքը:**

Մեր ազգային ընթացքը տարրելովում է պետականից: Մենք պիտի պարզենք, թե ինչ խորեն ունենք մեր առաջ, որպեսզի ապահովենք մեր ընթացքի անվտանգությունը: Մեր ազգային նավը, որ բեռնված է շատ հոգսերով ու խնդիրներով, իրավունք չունենք շատ բեռնելու: Մեր հաստատունությունը և կայունությունն ապահովելու համար մենք շատ արագ շրջադարձերի կարիք չունենք: Ուզում ենք, որ «Շրջադարձ» ապահովի մեր կայուն ու հաստատում ընթացքը:

Շատ ուրախալի է, որ ամսագրի համառոտ բովանդակությունը ներկայացվում է նաև օտար լեզուներով: Ցանկալի է, որ «Շրջադարձ» լույս տեսնի նաև օտար լեզուներով: Մենք աշխարհին ներկայանալու խնդիր ունենք:

**Համիկ Ստեփանյան, պատմական գիտությունների թեկնածու - Ես ակնկալում են, որ այս ամսագիրը արտահայտությունն է այս երկու անձանց ներքին մեջ կուլտուրայի, նրանց բազմակողմանի գիտելիքների, որը զար-**

մանալիորեն սահմանագատում չունի ոչ ոլորտների առունով, ոչ էլ ժամանակաշրջանների: Անգամ ամենահայտնի, վաստակաշատ գործիչների ու գիտնականների գործունեության անդրադառնախս, երբ թվում է, թե վերջիններս ամեն ինչ են ասել, այս երկու անձինք հանկարծ բոլորվին նոր խոսք, նոր կարծիք են հրապարակ հանում:

Ես հուսով եմ, որ Գևորգի և Հասմիկի տնկած ծառը պետք է աճի, մեծանա և շատ պտուղներ տա՝ ի շահ մեր ժողովրդի: Թող նրանց այսքան ներդաշնակ գործունեությունը գերծ լինի որոգայթներից (մերօրյա «հայածված առաքյալների» նման են վերաբերվում Հասմիկին և Գևորգին): Նրանց բանած ծանապարհը, որ քարքարոտ է, իսկ մարդիկ միշտ չեն, որ հաճույքով են լսում ծշմարիտ խոսքը, թող հաջողություն բերի նրանց: Համոզված են՝ նրանց անդրադարձը ներքին թե արտաքին, հայ թե օտար հայագետների քարի թե չար, հայանպատ, թե հայալավ գործունեությանը ժամանակ առ ժամանակ դիմակագերծողի ապտակ է լինելու:

**Կարեն Սմբատյան, Ակարիչ - Վաղուց ի վեր սպասված բան էր «Շրջադարձի» ծնունդը: Նման ոգի չեն տեսել և ոչ մի պարբերականում: Եթե անգամ ոգի կար, այն չեր և այնպիսին չեր, ինչպիսին ներկայացնում է «Շրջադարձ»՝ ազգային, մարտնչող, առնական...**

Միրելի Հասմիկ և Գևորգ, դուք ձեր վրա շատ ծանր բեռ և պատասխանատվություն եք վերցրել: Մեր վիճակն այսօր ավելի քան ծանր է: Բայց ես հույս ունեմ, որ դուք պատվով կկատարեք ձեր իսկ ստանձնած առաքելությունը:

Ոգու նահանջ և ավելորդ պարտություններ ենք գրանցել մեր հաշվին: Թող որ «Շրջադարձ» նպաստի մեր հետագա հաղթանակներին:

Հաջողություն ձեզ:

## «ՇՐՋԱԴԱՐՁ»՝ ԿԱՅՔԷԶՈՒ

[www.shrjadardz.hayastan.com](http://www.shrjadardz.hayastan.com)

2004 թվականի հուլիս ամսվանից «Շրջադարձ» համահայկական ամսագիրը կարելի է կարդալ համացանցում: Հասցեն՝ [www.shrjadardz.hayastan.com](http://www.shrjadardz.hayastan.com):

Ամսագիրը տեղադրվել է հայկական ամենասիրված և ամենաօգտակար կայքերից մեկում՝ [www.hayastan.com](http://www.hayastan.com)-ում, ուր կարելի է սովորել հայերեն, լսել ավելի քան 3000 հայկական երգեր, դիտել հայկական մուլտֆիլմեր, ծանոթանալ հայկական նորությունների, սովորել հայոց պատմություն, մասնակցել հավաքերի, գրուցել աշխարհի տարբեր ծագերում ապրող մարդկանց հետ, դիտել հայկական նկարներ...

Տարբեր ուսումնասիրություններ ցույց են տվել, որ [www.hayastan.com](http://www.hayastan.com)-ը ամենից շատ օգտագործվող կայքն է ամբողջ աշխարհում: Այն ունի ուսւերեն և անգերեն տարբերակներ, և «Շրջադարձ» միակն է, որ ներկայացված է հայերենով:

[www.hayastan.com](http://www.hayastan.com)-ի հեղինակ, Անգլիայում ուսանող Արքուր Ասատրյանն ասում է, որ միշտ ցանկացել է իր կայքում ունենալ մի համահայկական ամսագիր, որը մտահոգված է հայկական համագյայն հոգմերով և համահայկական քարոզչություն է տանում: Արքուր Ասատրյանի ցանկությունն իրականություն դարձավ, երբ նա ծանոթացավ «Շրջադարձի» հետ:

Հուսով ենք, որ «Վերածննդի համախմբում» կազմակերպության և [www.hayastan.com](http://www.hayastan.com)-ի միջև համագործակցությունը կշարունակվի:

# ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱԿԱԿԻՑ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ՂՐԱՑՑ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

**Ա**յսօր ամբողջ աշխարհում շատ են խոսում մարդու իրավունքների մասին: Մարդու իրավունքները ուժնահարում են և մարդիկ, և պետությունները: Ամենամեծ չարիքը, թերևս, պատերազմն է: Իսկ պատերազմի ժիրաններից մարդուն պաշտպանելն ամենակի է նոր գաղափար չէ: Բայց ի՞նչ պետք է: Ի՞նչ օրենքներով:

Ի՞նչ ակունքներից է բխում մարդասիրական իրավունքը՝ ռազմական բախումների դեպքում: Ի՞նչ աղերսներ ունեն միջազգային մարդասիրական իրավունքի ժամանակակից նորմերը անցյալի պատմության հետ՝ մասնավորապես: Այդ մասին է մեր գրույցը մայոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ Սուլեն Սարտիկյանի հետ:

- Միջազգային իրավունքի ժամանակակից համակարգի կայացման գործընթացում ամենացավոտը, թերևս, զինված ընդհարումների իրավունքն է: Խախ՝ ի՞նչ է նշանակում զինված ընդհարումների իրավունք և ինչո՞ւ է «կաղում» այդ բնագավառի կայացումը:

- Դարեր շարունակ ձևավորվել է մի մտայնություն, որը, ավելի քան երկու հազարամյակ առաջ, հռոմեացի հայստի հրետոր Ցիցերոնի ճառերից մեկում ձևակերպվել է այսպես. «Եր զրնգում են զենքերը, օրենքները լրում են»: Մարդկությունը պետք է անցներ երկու համաշխարհային պատերազմների բովով՝ վերջնականապես համոզվելու համար, որ անենախոշոր տրամաչափի թնդանորների որոտն անգամ չպետք է կարողանալ թեցնել օրենքի ձայնը:

Ժամանակակից աշխարհում զանգվածային ոչնչացման գենքի բազմաթիվ տեսակների ստեղծումն ու նրա նորանոր տեսակների վրա կատարվող ամենիհատ ուսումնասիրությունները մեկ անգամ և մեզ ստիպում են նորովի գնահատել պատերազմի ժամանակ զինված մարդու գործողությունների տրամաբանությունը: Խիստ պահանջ է առաջանում նոր որակումներ գտնել դժվար բնութագրվող «ռազմական հանցագործություն» հասկացության համար: Այս ամենով էլ զրադարձ է «զինված ընդհարումների իրավունք» գիտությունը, որը մի քանի տասնամյակների պատմություն ունի: Սակայն շատ սխալված չենք լինի, եթե ասենք, որ դրա սաղմերը ձևավորվել են առաջին հակ պատերազմների հետ միասին:

Ինչպես իրավացիորեն նկատել է միջազգային մարդասիրական իրավունքի պատմության ժամանակակից, մեծագույն մասնագետներից մե-



**Միջազգային մարդասիրական իրավունքի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները կարծես աչքաթող են արել պատերազմների իրավունքի հնագույն ավանդույթներ ունեցող հայ ժողովրդի պատմության վաղ շրջանը, որը կամ ընդհարապես հետազոտված չէ, կամ անբավարար է ուսումնասիրությունը:**

Կը՝ ժաման Պիկտեն. **«Մարդասիրական իրավունքի արմատները շատ ավելի խոր են, քան երկար ժամանակ կարծում էին նեղ աշխարհայացք ունեցող որոշ եվրոպացի հեղինակներ, ովքեր հակված էին նրա ծագումը համարել միջին դարերը»:**

Զինված բախումներում մարդասիրական իրավունքի շրջանակների ու ընդգրկման մասին պատկերա-

ցումները տարբեր պատմական դարաշրջաններում տարբեր են եղել: Դա տեսնում ենք նոյնիսկ նոյն ժողովրդի տարբեր հասարակական խավերի ու սոցիալական խմբերի օրինակով: Ցավով պետք է նշել, որ միջազգային մարդասիրական իրավունքի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները կարծես աչքաթող են արել պատերազմների իրավունքի հնագույն ավանդույթներ ունեցող հայ ժողովրդի պատմության այս կողմի ուսումնասիրությունը:

Թերևս դա է պատճառը, որ ժամանակակից դիգորիում է իր գործընկերների անհեռատեսությունից: Մինչ օրս շատ սահմանափակ է ներկայացվում միջազգային մարդասիրական իրավունքի պատմության վաղ շրջանը, որը կամ ընդհարապես հետազոտված չէ, կամ անբավարար է ուսումնասիրությամբ:

Հայոց ռազմական իրավունքի պատմությունը մեզ հնարավորություն է տալիս հետևել հնագույն ժամանակներից մեր նախնիների վարած պատերազմների հիմնական սկզբունքներին: Դեռևս բրոնզե դարի (Յայկական լեռնաշխարհում՝ մ.թ.ա. IV հազարամյակի վերջից մինչև մ.թ.ա. II հազարամյակի վերջը) ընթացքում մեր իրականության մեջ սաղմնավորվել են ոչ միայն զրավագործ և ենթակա հարաբերությունները, այլև մարտադաշտում կամ նրանցից դուրս հակառակորդի հետ նրանցից յուրաքանչյուրի վարքը կանոնակարգող առանձին դրույթներ:

- Ի՞նչ փաստերով կիմնավորեիք Ձեր միտքը:

- Համաշխարհային պատմության մեջ վկայված հնագույն ռազմական դաշինքներից մեկը կնքել են խեթական պետության Սուլալուլիումա II և Յայասա-Ազգի ցեղապետության Յու-

գանճա թագավորները՝ մ.թ.ա. XIV դարում: Այս մասին տեղեկացնում են խեթական արձանագրությունները: Ուազմական դաշնակցության պես քարդ ասպարեզում որպես լիիրավ կողմ կարող էր հանդես գալ միայն ծևափորված ռազմահրավական համակարգ ունեցող պետությունը, որը հստակորեն ճշգրտել էր ինչպես հակառակորդի, այնպես էլ դաշնակցների նկատմամբ իր պարտավորություններն ու իրավունքները:

Արձանագրություններից պարզ երևում է, որ Հայասան Միտաննի (որի դեմ էլ հիմնականում ուղղված էր վերոհիշյալ ռազմական դաշինքը), դեմ պատերազմները վարել է ոչ միայն խեթերի հետ համատեղ, այլ առանձին դեպքերում նաև ինքնուրույն: Կարող ենք եզրակացնել, որ դաշնակցային պարտականությունները ոչ միայն չեն գերադասվում պետության շահերին, այլև տվյալ պարագայում ստորադասվում էին:

Այս շոշանքի է վերաբերում ռազմագերմերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կարգի (նրանց փոխանակման և այլն) մասին առաջին գրավոր տեղեկություններից մեկը:

Հայասա-Ազգից ժառանգված հրավական և, մասնավորապես, ռազմահրավական զարգացած ու համակարգված միտքը հետագա զարգացում ստացավ դեռևս մ.թ.ա. IX դարում Արարատյան թագավորության վարած պատերազմներում: Արարատյան թագավորությունը ոչ միայն կարողացել է դիմակայել հզոր հարեւականի ճնշմանը, այլև միավորել լեռնաշխարհի գրեթե ամբողջ բնակչության՝ մեզ տալով ժամանակակից միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար դրույթներին գրեթե համարժեք վարվեցողության դասական օրինակներ:

Արարատյան թագավորների (Արգիշտի I, Սարդուրի II, Ռուսա I) արձանագրություններում բազմաթիվ օրինակներ կան ռազմական արշավանքների և պատերազմների ժամանակ հակառակորդի գերիների նկատմամբ ներողամիտ վերաբերմունքի, պարտված հակառակորդի իրավունքները հարգելու, իսկ առանձին դեպքերում՝ նաև ինքնասիրությունը չունահարելու մասին: Բերենք մի քանիսը.

«...Արգիշտին ասում է... Դիառլի ցեղի արքային ստրկացրի, ազատեցի, հարկի տակ [դրեցի] (իշխանական պայմաններով - U. U.)»:

«...Ես նրան (Սարդուրին - U. U.) բարեխիղծ վերաբերվեցի, նստեցրի (բողեցի - U. U.) Ես նրան իր տեղում, իմայցի ես նրան՝ հարկ վճարելու պայմանով...»:

«Արդինի արքան Խալդի աստծո տաճարում Ռուսային հավատարմության երդում տվեց... [Ես] (Ռուսա U-ն՝ նրան - U. U.) գավառապետ հաստատեցի, բնակեցրեցի Արդինի քաղաքում...»:

«Ռուսան՝ Սարդուրիի որդին, ասում է. Արդինի քաղաքի Ռուզանա արքան (Մուսասիր) եկավ առջևս: Վերցրեցի (ինձ վրա) նրա ամբողջ զորքը կերակրելու հոգսը»:

Դժվար չէ նկատել շուրջ երեք հազարամյա վաղեմություն ունեցող այդ

**Հակառակորդի բանակի մարտիկը հստակորեն տարանջատվում էր մարտական գործողություններին անմիջական մասնակցություն անձնակազմից: Նման նորմ միջազգային մարդասիրական իրավունքում չկա նույնիսկ մեր օրերում:**

Տողերի հեղինակների կիրառած պատերազմների նորմերի մերձավորություն՝ 1949թ. օգոստոսի 12-ի ժնկի III կոնվենցիայի պահանջներին:

Գրավոր տեղեկությունների պակասն է միայն պատճառը, որ մեր մյուս թագավորների ռազմական գործունեության այս կողմի մասին մենք գրեթե ոչինչ չգիտենք: Ուազմական «արտակարգ դաժանություններ» Արարատյան թագավորության անկումից հետո էլ Հայաստանում չեն եղել:

Հակառակորդի նկատմամբ ներողանմտության փայլուն օրինակ է 370թ. հայոց բանակի՝ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ Սասանյան Պարսկաստանի Շապուհ II թագավորի բանակին ծանր պարտության մատնելու փաստը: Մարտադաշտից ճողովրած Շապուհը մի կերպ կարողանում է ազատվել հետապնդումից ու փրկել իր կյանքը, սակայն Արևելքի հզոր տիրակալի կանանցը գերվում է: Մուշեղ Մամիկոնյանի պարա-

գայում տեսնում ենք մի շարք ակնհայտ առավելություններ, որոնք մեզ հիմք են տալիս պնդել, որ գործ ունենք պատերազմի վարման միանգամայն այլ կանոնների հետ:

Շապուհի գերված կանայք չեն անարգում, թեև դրա համար կային մի շարք հիմնավոր պատճառներ:

Կանայք ոչ թե պահվեցին «պատվավոր» գերության մեջ, այլև մեծ պատիվներով արձակվեցին, որ «ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ»:

Կանանց վերադարձին՝ փոխարեն որևէ քաղաքական կամ ռազմական պահանջ չդնելով (թեև հայոց սպարապետը հետագայում քննադատվել է դրա համար):

Կանայք չդարձան հաղթարձին՝ փոխարեն կործողությունները կաշկանդելու համար, ինչպես, աւենք, Ալեքսանդր Մակեդոնացին մ.թ.ա. 333թ. Խոսի ճակատարտում Դարեհ III-ի ընտանիքի անդամների գերության փաստն օգտագործեց՝ ուղղակի քաղաքական շամտաժ հիշեցնող քայլեր ձեռնարկելու համար:

- Արդյո՞ք միայն կանանց ու երեխաների նկատմամբ էր գրասիրտ հայոց ռազմական վերախավը:

- Ոչ: Կային պատերազմներու բազմաթիվ կանոններ, որոնցով արդեն վաղ միջնադարում էապես սահմանափակվում էին հակառակորդի մասին պատկերացումները:

Ձենոր Գլակ Ասորու և Յովիան Մամիկոնյանի անունով հայտնի «Տարոնի պատմության» մեջ Սասանյան Պարսկաստանի տիրապետության դեմ Տարոնի հերոս հայության մարտերի բազմաթիվ օրինակներ են բերվում: Յաղթանակած Սմբատ Մամիկոնյանը հրամայել է ազատ արձակել պարսկական բանակի չորս հարյուր ուղղապահաններին:

Այս արարքն էլ ավելի մեծարելի է, եթե նկատի ունենանք, որ գերված ուղղապահների նկատմամբ այդ մարդասիրական քայլը կատարվել է անասելի դաժան ճակատամարտից հետո:

Ապշել կարելի է. հակառակորդի բանակի մարտիկը հստակորեն տարանջատվում էր մարտական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող անձնակազմից: Նման նորմ միջազգային մարդասիրական իրավունքում չկա նույնիսկ մեր օրերում: Ակնհայտ է, որ այդպիսին չեն նաև Յազգայի Խ կոնվենցիայի, Ժամանակակից լրացուցիչ և

արձանագրության կամ այլ նորմերով առաջադրվող սահմանափակումները, քանի որ «Տարոնի պատմության» մեջ հատակ նշվում է, որ ուղտապահները հակառակորդի բանակում ծառայության մեջ էին գտնվում:

Ինչպես համաշխարհային, այնպես էլ հայոց պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ պարտված կողմի զինվորները ապաստանել են հաղթած երկի տաճարներում, իսկ հետագայում ազատ արձակվել կամ ստրկացվել՝ պահպանելով կյանքը: Նման օրինակ կա նաև հայոց պատմության մեջ. պարսկական բանակի մի ամբողջ գունդ հանձնվում է Մատրավանքի կրոնավորներին՝ իրենց փրկելու և պաշտպանելու խնդրանքով:

Բազմաթիվ դեպքեր կան, որ պարտված հակառակորդի վիրավոր զինվորների նկատմամբ հիրավի մայրական հոգատարություն են դրսեն-րել նաև հայ կանայք:

- Հայ ժողովրդի՝ պատերազմների իրավունքի դրույթներն ուսումնասիրելու դասական օրինակ է «Սասունցի Դավիթ» եպոսը:

- Բոլոր՝ չորս սերունդների ներկայացուցիչներն էլ հայրենի հողի պաշտպանության համար գրեթե անընդհատ պայքարի մեջ են: Սակայն առանձնացնենք միայն նրա կենտրոնական հերոսի՝ Դավիթ կերպարը, որին ժողովուրդն օժտել է անսահման մեծահոգությամբ՝ նույնիսկ թշնամիների նկատմամբ: Այսպես՝ ոխերիմ թշնամու դեմ կռվելիս, երբ մտադիր է նորան ամիսնա ոչնչացնել, Դավիթն աշխատում է իր համար չստեղծել առավել շահավետ պայմաններ. համարձակի չի հարձակվում չնախապատրաստված հակառակորդի վրա:

Դավիթը երկու անգամ է գրոհում թշնամու բանակի վրա: Երկու դեպքում էլ նա չի մոռանում կանգնեցնել իր ձին և ազդարարել, որ թշնամին արթնանա, զենք վերցնի, ձի հեծնի ու պատրաստվի կռվելու:

Սա նման չէ այն մարտակոչերին, որոնցով Տրոյայի պատերի տակ ու պարիսպների վրա միմյանց բրոբրքել են հելլեններն ու տրոյացիները: Դավիթ մարտակոչը սեղմ է, հանդարտ ու անմիջական: Դա ոչ թե ասպեսների համար սովորական դարձած տասնյակ ճակատանարթերից մեկն էր, այլ մարտական պայմաններին անսովոր մարդու՝ հովվի՝ սրի փոխարեն մահակ ու գութանի մաճ բռնող գյուղացու մուտքը ռազմաբեմ:

- Հակառակորդի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի նման բարձր դրսարությունների ունեցող ժողովուրդը ինչպես է այդ ամենն արտահայտելու օրենսդրություն:

- Ներսես Շնորհալու ստեղծագործություններում առանձնանում է 1166թ. գրված «Թուղթ ընդհանրականը»՝ որպես XII դարի հայ հասարակական-իրավական մտքի պատմության հիմանալի մի նմուշ:

Հայ զինվորականությանը նվիրված VI զիստում ասվում է հետևյալը. «Անխողորեն և անիրավաբար որևէ մեկին մի՛ նեղեք» կամ «Դահիճների օրենքով հանդես չգաք» և այլն: Սա շատ բաներով հիշեցնում է ժամանակակից պատերազմների հրավունքի հիմնարար դրույթները, չնայած գրվել է մեզանից շուրջ ինը դար առաջ:

Ամփոփելով զինվորականներին ուղղված իր պահանջները՝ Շնորհալին նաև պատվիրում է. «Սարմնական զենքից ավելի հավատքի գենքով սպառազինվեք <...>, որպեսզի պատերազմներուն Աստված լինի ախտ-

Բազմաթիվ դեպքեր կան, որ պարտված հակառակորդի վիրավոր զինվորների նկատմամբ հիրավի մայրական հոգատարություն են դրսեվորել նաև հայ կանայք:

յանը և թշնամիներին հալածի ձեր առջևից»:

Հակառակորդի նկատմամբ մարդասիրության բոլոր դրսարությունների պահպանուով արդարացի (հետվաբար՝ աստվածահաճո) ռազմական գործողությունների վարումն այսօր զինված ընդհարությունների հրավունքի հիմքն է: Կարելի է թվարկել այդ նորմերը հիմնավորող տարբեր կոնվենցիաների տասնյակ հոդվածներ:

XII դարի հայ իրավական մտքի ամփոփման փայլուն արտահայտությունը Միհիթար Գոշի «Դատաստանագիր Դայոցն» էր, որը հսկայական ազդեցություն է ունեցել հայ իրավական մտքի պատմության զարգացման վրա:

Ի թիվս պետական, քրեական և քաղաքացիական իրավունքի նորմերի՝ նա կարևոր տեղ է հատկացել պատերազմի իրավունքի ամենա-

տարբեր հարցերի կանոնակարգմանը: Գոշը ծգտել է իհմնավորել մարտական գործողությունների ժամանակ անխուսակելի սպառազիրությունները: Ոչ միայն անթույլատրելի է համարվում հակառակորդ երկրի խաղաղ բնակչության նկատմամբ ատելության անգամ ամնշան դրսարությունը, այլև առանձին՝ 110-րդ հոդվածում

**Մեզանից ութ հարյուր տարի առաջ հայ իրականության մեջ գործում էին պատերազմների այնպիսի մարդասիրական օրենքներ, ինչպիսիք չկան նույնիսկ մեր օրերում...**

քննվում է գերված այլազգի կանանց նկատմամբ հաղուալից վերաբերմունքը՝ ընդհուած մինչև նրանց հետ ամուսնանալու կարգը:

Գոշը քննարկում է նաև պատերազմի ժամանակ զորակոչի ենթակա տղամարդկանց ոչ միայն պարտականությունների, այլև իրավունքների հարցը: Նույն կերպ նաև խիստ որոշակիացվում է հակառակորդի՝ զինված պատերազմողի կերպարը և ճշտվում է ինչպես մեր, այնպես էլ հակառակորդի կողմից պատերազմներու համար հավանական բնակչությունը:

Անհավանական է թվում, որ մեզանից ութ հարյուր տարի առաջ հայ իրականության մեջ գործում էին պատերազմների այնպիսի մարդասիրական օրենքներ, ինչպիսիք չկան նույնիսկ մեր օրերում... Ժամանակակից զինված ընդհարությունների իրավունքը արգելում է միայն մինչև տասնինդան տարեկան երեխաների հավաքագրությունը զինված պատերազմունքի համար կարող է համարված լինել:

- Ուրիշ ի՞նչ «օրենսգիրք» է գրվել հայ իրականության մեջ:

- Միհիթար Գոշի «Դատաստանագիր Դայոցն» առաջադրած ռազմահարավական սկզբունքների օրգանական շարունակությունը և զարգացման նոր փուլը Կիլիկիայի Հայկական թագավորությունում գործող օրենքների համապարփակ ժողովածուն է Սմբատ Գունդստաբլի (Սպարհապետ) գրած «Դատաստանագիրքը»: Այստեղ վերիանվում են ոչ միայն գերիների, այլև նրանց նկատմամբ ամ-

բողջ հասարակության վերաբերմունքի հարցեր:

Դատկանշական է, որ 40-րդ հոդվածով՝ կամոնակարգվում է գերի ընկած ամուսնուն սպասելու կարգը:

Պետությունը պատասխանատվություն էր ստանձնում պաշտպանելուն քաղաքացիական բնակչության իրավունքները (Հոդված 129. Թշնամու հարձակման և իրերի հափշտակման մասին):

Շարունակելով նախկինում հայ իրավական մտքի մեջ լայն տարածում ստացած դրույթը՝ Սմբատ Սպարապետը փորձում է օրինականացնել նաև գերիների նկատմամբ վերաբերմունքը: «Դատաստանագիրը Դայոցի» դրույթները կրկնելով՝ թույլատրվում էր գերուհու հետ զինվորի ամուսնությունը (Հոդված 115):

- Միջնադարյան իրավական մտքի նման քարձը մակարդակով էր, հավանաբար, պայմանավորված Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացի» ի հայտ գալը՝ որպես ապագա հայկական պետության համար առաջարկվող սահմանադրություն:

- Ապշեցնում է Շահամիրյանի քաղաքական ու հասարակական-իրավական հեռատեսությունը: Նա, փաստորեն, աշխարհում առաջինը (ԱՄՆ սահմանադրության ընդունումից վեց տարի առաջ) ստեղծեց սահմանադրություն, այն էլ՝ Հնդկաստանում:

«Որոգայթ փառացում» վերհանվում է բանակին և, առհասարակ, զինվորական լյանքին առնչվող հարցերի քավական մեծ շրջանակ (պետության զինված ուժերի կառուցվածքից մինչև հրամակազմի քանակը, պարտականությունները, իրավունքները և այլն): Այն ներառում է նաև գերի ընկած կամ զոհված զինվորականների և գերիների հարցերը: Վերջինիս անդրադառնանքը թիւ ավելի մանրամասնորեն, քանի որ այն արտացոլում է հայոց ռազմարվեստի և ռազմական ամբողջ պատմության զարգացումը՝ մինչև XVIII դարի երկրորդ կեսը:

«Որոգայթ փառացում» վերհանվում են իրավական նորմեր, որոնք այսօր իսկ նախանձելի-քաղձալի են մեզ համար, իսկ XVIII դարում ուղղակի անհավանական էն: Գերի զինվորականների հետ վարվելու կարգի մասին հոդվածում կարդում ենք. «Յուրաքանչյուր գերի ընկած զինվորական՝ աստիճանավոր կամ ղեկավար պաշտոնյա, եթե երդմանը ու ստորագրությամբ խոստանում է, որ տվյալ պատերազմի ընթացքում, որի

ժամանակ ինքը գերվեց, մինչև խաղաղության հաստատման պահը զենք չի բարձրացնի հայոց զորքի դեմ և իրեն գերի վերցնողը որ ժամին կանչի, հնազանդությամբ կներկայանա <...>, նրան տրվում է ազատ արձակման բոլոր, բայց որի նա ազատ, անկաշկան կարող է ապրել այն տարածքում, որը նպատակահարմար է համարում իրեն գերողը. նա կալանքից ազատվում է և սպասում խաղաղության հաստատմանը: Խաղաղության ժամանակ նրա հետ վարվում են բայտ խաղաղության համաձայնագրի»:

Զափազանց մարդասիրությամբ է աչքի ընկնում նաև գերիներին պահպանելու կարգը: Առանձին հոդված է հատկացված դրա հետ կապված ծախսերին (հատուկ շեշտվում են՝ կերակուրը, հագուստը, դեղորայքը): Ընդ որում, նույնիսկ այն դեպքում, երբ մարդասիրության այս չտեսնված դրսնորումը միակողմանի է, իսկ թշնամի երկիրը հրաժարվում է հոգալ ոչ միայն գերված հայոց զինվորների, այլև իր թողած գերիների հոգսերը, արգելվում են նրանց մահապատիժը և անձի ինքնասիրությունը վիրավորող այլ արարքները: Առավելագույնը որ թույլատրվում է՝ գերիներին «դատապարտել Շայաստանում ծառայական վիճակի», այսինքն՝ աշխատեցնել՝ սեփական աշխատանքով իր կենսական ծախսերը հոգալու նպատակով միջոցներ հայթայթելու համար:

Գրավյալ տարածքներում հայոց բանակի զինծառայողների վարքը կանոնակարգվելու էր ոչ միայն քրիստոնեական ավանդույթներով, այլև օրենսդրություն:

Պատերազմի ժամանակ մարդու իրավունքների ժամանակակից անգամ ամենախստ պահանջների պահանանան օրինակ են պատերազմի ժամանակ հաղորդակցության, հասարակական թղթակցության կարգի ու պաշարված բնակավայրերից դուրս գալու կարգի մասին հոդվածները:

Խաղաղ բնակչությանը զինվորականից տարբերակելու չգերազանցված օրինակներ են օտար աշխարհից փախած և մեր երկրում պատասխանած անձանց և օտարների՝ Հայոց աշխարհից դուրս գալու կարգը կանոնակարգող հոդվածները՝ պատերազմի ժամանակ:

Չուզահեռաբար քննարկվում են ինչպես առանց դիմադրության հանձնված բնակավայրերի բնակչու-

թյան հետ վարվելու կարգը, այնպես էլ գրավված անրությունների պահպանումը: Իսկ անձնատուր եղած բնակչության գույքային իրավունքների պահպաննան մասին հոդվածն ուղղակի հավասարության նշան է դնում հակառակորդի անձնատուր եղած բնակավայրերի խաղաղ բնակչության և հայոց պետության քաղաքացիների միջև՝ առանց նույնիսկ ձևական տարբերության:

«Գերուն սպանողի պատժի մասին» հոդվածում կարդում ենք. «Եթե զինվորը կամ հրամանատարը սառնարյուն կերպով սպանում է անմեղ գերուն, մահապատժի է ենթարկվում»: Նկատենք, որ այս դեպքում թագավորական, իշխանական կամ այլ ծագում չունեցող, ինչպես նաև ռազմավարական առումով որևէ կարևորություն չներկայացնող գերին իր իրավունքներով հավասարեցվում է Հայաստանի քաղաքացիներին, քանի որ միայն այդ դեպքում էր մարդասպանի համար մահապատիժ սահմանվում: Սա ոչ միայն մեր տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում չլսված մարդասիրական նորմ է, որին համարժեք քրեական իրավունքի միջն այդ երբեք չի եղել ոչ մի երկրում:

- **Ի՞նչ եզրահանգման եր եկել:**

- Ամենակարևոր հայ զինվորականի կերպարի վերանայման անհրաժեշտությունն է: Վաղուց արդեն ժամանակն է, որպեսզի մեր գիտակցության մեջ պատմական անցյալում կոտորվող հայի կերպարի փոխարեն արմատավորվի հաղթանակոր, ընդ որում, մեծահոգաբար պատերազմելով հաղթանակներից հետո հակառակորդին ներող հայի կերպարը:

Կարծում ենք, որ «Միջազգային մարդասիրական իրավունք» առարկան միանշանակ համահունչ է հայ զորավարի (հրամանատարի) ու զինվորի պատմականորեն ձևակերպված ոգուն, հետևաբար ոչ միայն միջազգային իրավունքի, այլև մեր ազգային մտածելակերպին ու աշխարհայցքին մոտ դրույթներ պարունակող այդ առարկան ՀՀ ռազմական ուսումնական հաստատությունների համակարգում ներառելը ժամանակին համապատասխանող ու արդարացված քայլ է:

**Հասմիկ Գուլակյան**

**3. 4. - «Ծրջադարձը» պարբերաբար կամդրադառնա հարցազրուցում արժարձված նորմերին:**

# Ծահումյանը շահումյանցիների շուրջերին մնաց մրմունք...

ԼՂՅ-ի հյուսիսային մասում է գտնվում լեռնային գեղատեսիլ բնությամբ, զուլալ գետակներով, աղբյուրներով, պտղառատ անտառներով, ալպյան արոտավայրերով հայտնի Ծահումյանի շրջանը: Նրա հարավային սահմանագծի երկարությամբ ձգվում է շահումյանցիների սրբությունը՝ Մոավի սարը: Դարաբաղի ամենաբարձր լեռնագագաթը՝ Գրամիշ լեռը՝ 3724 մ բարձրությամբ, նույնական գտնվում է Ծահումյանում:



Երվանդ Սիմոնյան


1989թ. մարդահամարի տվյալներով՝ շրջանն ուներ 20 հազար բնակչություն, որից 17 հազարը՝ հայ: Ծահումյանի տասնվեց բնակավայրերից համեմատաբար խոշոր են Վերիշենը, Գյուլհստանը, Մանաշիդը, Ղարաջինարը, Էրքեջը, Բուզլուկը: 1988թ. սկզբներից շրջանի հայությունը հերոսաբար պայքարեց Աղբեջանի 70-ամյա գաղութային լծի դեմ, ինքնորոշվեց և վերամիավորվեց ԼՂՅ-ին: Բայց, ափսոս, որ այն կարծ տևեց: 1992թ. Շուշիի ազատագրումից մեկ ամիս անց՝ հունիսի 13-ին, անհասկանալի պատճառներով, Ծահումյանն ընկավ և տասներկու տարի է՝ բոլորի շուրջերին այն մնացել է որպես մրմունք: Տեսնես դրախտային այդ երկրից ի՞նչ է մնացել այսօր...

Երբ սկսվեց այդ լեռնաշխարհի՝ պատմության մեջ չտեսնված խաղաղ բնակչության ողբերգությունը՝ անկազմակերպ գաղթը դեպի անհայտություն, մարդիկ մոլորված հեռացան իրենց հարազատ տներից՝ թշնամուն թողնելով ամբողջ ունեցվածքն ու նաև ամենասուրբը՝ հայրենի հողում հանգստացող պապերի ու հարազատների շիրիմները: Կարծես կրկնվում էր դարասկզբի ոճիրը...

Արցախյան գոյամարտի նվիրյալներից մեկը՝ Վարդան Ստեփանյանը (Դուշման), շատ տարածքների, այդ թվում նաև՝ Շուշիի ազատագրմանն է մասնակցել: Երբ լսում է, որ Բուզլուկի ինքնապաշտպանները գյուղը թողնելու մտադրություն ունեն, անմիջապես իր ջոկատով հասնում է Բուզլուկ, բայց պաշտպաններն արդեն դուրս են եկել, պատմում է Շուշիի «Առանձնակի» գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլյանը: Եվ նա սկսում է սպասել՝ հուսալով՝ ուր որ է կվերադառնան ինքնապաշտպանները: Սակայն ոչ Բուզլուկի, ոչ էլ մյուս ինքնապաշտպանական ջոկատները չվերադառնան: Ցոթ մարտիկներով ի՞նչ կարող էն անել՝ տեխնիկայով ու ուղղաթիռներով

զինված ռուսական բանակային զորամիավորումների և օմօնի (հատուկ նշանակության միլիցիայի ջոկատ - խմբ.) դեմ: Բուզլուկը թողնելուց առաջ Վարդանը տնետուն է ընկույտ, վառում գյուղի բոլոր տների լույսերը, որ թշնամին իմանա, թե գյուղում կտրիճներ ու պաշտպաններ կան: Մի քանի քակերում էլ հողով ծածկում է արևերես դուրս եկած գետնախնձորները. «Երբ գյուղացիք տուն վերադառնան, գոնե առաջին օրն ուտելու բան ունենան»: Դետո էլ ժամանակ է գտնում ու իրեն գյուղի գերեզմանատուն գցում, ծնկում մի շիրիմի առջև՝ «Հայր մեր» արտասանում, և ծնկաչոք մեղյա գալիս. «Ներեցեք, մե՛ր պապեր, ձեր չար որդիներին, որ ձեզ այդպես անպաշտպան են թողել, մենք դեռ կգանք...»: Իսկ Շուշի մտնելուց հետո հապշտապ գնում է Շուշիի գերեզմանոց՝ ձեռքին շամպայնի շիշ: Կաթիլ-կաթիլ կաթեցնում է գինին շիրիմների վրա և բացականչում. «Մե՛ր պապեր, Շուշին ազատագրված ե, հանգստացեք»...

Ծահումյանի անկումից անցել է տասներկու տարի:



Սանասար և Պողոս Սիմոնյաններ

Գուցե ժամանակը դատաստան դառնա, և օրերից մի օր ցշմարտությունը հրապարակվի...

Իսկ հիմա մեր սերնդին պահ տանք այս ժամանակի գողգորայի մասին պատմող մի պատմություն:

Ծահումյանից տեղահանվածների մեջ էր նաև Վերիշենցի Արփիկ մայրիկի ընտանիքի կեսը: Նա ութ երեխաների և հարսների հետ թռնում է գաղթի ճամփան: Գյուղը թողնելու հրամանն այնքան անակնկալ են ստանում, որ չի հասցնում անզամ ամուսնուն՝ Երվանդ Սիմոնյանին, որդիներին՝ Պողոսին ու Սանասարին տեսնել կամ հրաժեշտ տալ. նրանք գյուղի սահմանն էին պահում: Արփիկ մոր Պողոս որդին եղել է Շահեն Մեղրյանի ուղղաթիռում և զոհվել նրա հետ՝ 1993թ. մարտի 17-ին, ու մինչ օրս նրա աչքը ամուսնու և Սանասար որդու ճամփին է...

Ծահումյանցիների քարավանը շարժվում է անկանոն: Խմբերը երթեմն ալիքների պես իրար են միանում, երթեմն էլ՝ հեռանում: Այս ու այնտեղից աղեկտուր ծայն են տալիս իրար. հարազատների փնտրութի կանչեր, հուսահատ ճիշեր, մանկանց լացու-

# ՊԱՐԱՍ

## Անցման՝ արդի փուլի սոցիալական խնդիրները Արցախում

Ուղարմանա Մանգասարյան  
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**S**նտեսության կենտրոնացված համակարգից շուկայական հարաբերություններին անցումն ուղեկցվեց բացասական հետևանքներով՝ տնտեսության աճի կրծատում, գների աճ, փողի արժեզուկում, գործազրկության ավելացում, հարստության բնեռացում, բնակչության աղքատացում և այլն։ Անցման ժամանակակից փուլում ԼՂՀ-ում շարունակվում է բնակչության կենսամակարդակի անկումը, որի հետևանքով հազարավոր ընտանիքներ դարձել են խիստ կարիքավոր։ Ծանր պայմաններում են հայտնվել հատկապես տարեցները, ծնողազուրկ երեխաները, հաշմանդամները, և սոցիալապես այլ անապահով խնդիրներին պատկանող ընտանիքները։

1995 թվականից սկսած հանրապետությունում հաջողվում է պահպանել վերջին տարիների ամենակարևոր ծերթերում՝ նաև ընտանիքների մասնակիցներում ուղարկած կայունությունը, որը բնութագրվում է ցածր սղաճով և տնտեսական ցուցանիշների դրական տեղաշարժերով։ Դա նպաստեց բնակչությանը, պետական աջակցության ծավալի ընդունմանը և սոցիալական ոլորտում մի շարք ծրագրերի իրականացնմանը։ Դրանցից կարևորվում է «Ծնելիության և բազմազավակության խթանման» ծրագրը, որի նպատակը բնակչության բնական աճի և բազմանդամ ընտանիքներին նյութական աջակցության ապահովումն է։

Ծրագրով նախատեսվում է արտոնություններ և փոխհատուցումներ։ Այսպես՝ ընտանիքի յուրաքանչյուր երրորդ և հաջորդ նորածին երեխայի անվամբ բացվում են ժամկետային նպատակային ավանդներ՝ 700-3000 ԱՄՆ դոլարի չափով։ Ընդ որում՝ ծնողները կարող են պարբռաբար ստանալ տոկոսները, իսկ երեխան՝ չափահաս դաշնամունք պես՝ մայր գումարը։ Յոթերորդ երեխայի ծննդի դեպքում ընտանիքն տրամադրվում է բնակարան։ Դա նպաստեց Արցախում բազմազավակ ընտանիքների թվի աճին։

ԼՂՀ-ում պետական նպաստների համակարգը գործում է 1997թ. հուլիսի 1-ից։ Դամաձայն կառավարության որոշման ամենանյա նպաստ է տրամադրվում հաշմանդամ երեխաներին (4000-ական դրամ), երկողմանի ծնողազուրկ երեխաներին (3000-ական դրամ), 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին (2000-ական դրամ)։ Պետական նպաստներն ու սոցիալական վճարումները, համարվելով առաջնահերթ, դուրս են գործությունից։



տրվում են առանց ուշացումների։

Չնայած վերը նշված բարեփոխումներին՝ այնուամենայնիվ ԼՂՀ-ում դեռևս օրենսդրորեն չեն ամրագրվել շուկայական տնտեսությանը բնորոշ սոցիալական ապահովության ձևերն ու մեթոդները, դրանց իրականացնման սկզբունքները, այդ համակարգի կառավարման կենտրոնացման ու ապակենտրոնացման խնդիրները, ֆինանսավորման աղբյուրները և այլ հիմնահարցեր։ Սոցիալական ապահովության քաղաքականության հիմնական խնդիրներից է բնակչության սոցիալական որոշակի վտանգներից պաշտպանելու նպատակով եկամուտների արդարացի վերաբաշխումը։ Պետությունն այդ պարտականության գերակշիռ մասն իրականացնում է կենսաբոշակային ապահովության միջոցով՝ այդ նպատակին ուղղված ծախսերը կատարելով տնտեսության զարգացվածության նակարդակին և աճին համապատասխան։

«Պետական կենսաբոշակների մասին» ԼՂՀ օրենքը գործում է 2004թ. հունվարի 1-ից։ Դամաձայն այդ օրենքի՝ տարիքային կենսաբոշակի իրավունք ունեն 63,5 տարեկան դարձած և առնվազն 5 տարվա ապահովագրական ստած ունեցող անձինք։ Ընդ որում, կանանց համար գործում է սանդղակ, համաձայն որի՝ 2004թ. նրանք կենսաբոշակի անցնելու իրավունք ունեն 59,5 տարեկանում, 2005թ.՝ 60 տարեկանում, 2006թ.՝ 60,5 տարեկանում։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1999-2003թթ. ԼՂՀ-ում նվազել է կենսաբոշակառուների,

ինչպես նաև կենսաթոշակի անցնող քաղաքացիների թիվը: Դա պայմանավորված է հիմնականում կենսաթոշակառուների շրջանում բարձր մահացությամբ, կենսաթոշակային տարիքի ավելացմամբ, նախակենսաթոշակային տարիքի անձանց արտագործով:

ԼՂՀ կառավարությունը 2004թ. հունվարի 1-ից սահմանել է կենսաթոշակի հիմնական չափը՝ 3000 դրամ: Իսկ կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ կերպ:

$K = R + (n \times U) \times Q$ , որտեղ  $R$ -ը հիմնական կենսաթոշակն է,  $n$ -ը՝ ապահովագրական ստաժի տարիները,  $U$ -ը՝ ապահովագրական ստաժի 1 տարվա արժեքը, որի չափը սահմանում է ԼՂՀ կառավարությունը. 2004թ. հունվարի 1-ից այն կազմում է 140 դրամ:  $Q$ -ն կենսաթոշակառուի անձնական գործակիցն է՝ հաշվարկման հետևյալ կարգով՝ մինչև 25 տարվա ստաժը բազմապատկվում է 0,04 գործակցով, իսկ 25 տարին գերազանցող ստաժը՝ 0,02 գործակցով, այնուհետև ստացված արտադրյալները գումարվում են:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ԼՂՀ-ում միջին ամսական կենսաթոշակը 2000թ. կազմել է 7211 դրամ, 2001թ.՝ 7348 դրամ, 2002թ.՝ 7604 դրամ, որը ցածր է ոչ միայն սպառողական, այլև պարենային զամբյուղի նվազագույն մակարդակից: Փաստորեն ԼՂՀ-ում 2002թ. տվյալներով կենսաթոշակը կազմում է միջին ամսական աշխատավարձի 25,6 տոկո-սը՝ (այդ պատճառով այսօր կենսաթոշակի անցնելը կենսաթոշակառուի համար նշանակում է հոգեբանական մահ):

Կենսաթոշակային համակարգը ենթակա է կատարելագործման, որի հիմքում պետք է դրվեն հետևյալ սկզբունքները.

Կենսաթոշակների բարձրացում և այնպիսի մակարդակի սահմանում, որը կկազմի միջին անվանական աշխատավարձի 35-40 տոկոսը,

Կենսաթոշակների հաշվարկման հիմքում սոցիալական հավասարության և սոցիալական արդարության սկզբունքների գործորում,

Կենսաթոշակների և այլ նպաստների ֆինանսավորման հստակ տարանջատում՝ ներառյալ սոցիալական թոշակների ֆինանսավորման և վարչարարության առանձնացում կենսաթոշակային հիմնադրամից,

Կենսաթոշակային հիմնադրամի վարչարարության բարելավում, և դրա իրավական կարգավիճակի հստակեցում:

Նշված միջոցառումների հաջող իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել կենսաթոշակները, նախապայմաններ ստեղծել նոր կենսաթոշակային համակարգի ներդրման համար, որը հիմնված կլինի յուրաքանչյուր անհատի կատարած վճարումների և ստացվելիք կենսաթոշակի մեջության կապի վրա:

Զարգացած երկրների փորձը ցույց է տվել, որ երկրի տնտեսական զարգացումը և տնտեսական աճի ապահովումը պայմանավորված են բնակչության սոցիալական վիճակով՝ աշխատողների գիտելիքների, որակավորման, առողջության մակարդակով, ընդհանուր առնամբ՝ բնակչության վերարտադրողական ներուժով: Այդ պատճառով էլ աղքատության վերացմանը, առողջապահու-

թյան և կրթության ոլորտների կատարելագործմանը, մարդկային կապիտալի պահպանման ուղղված ակտիվ սոցիալական քաղաքականությունը նպաստում է և տնտեսական աճին, և քաղաքական կայունությանը:

Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ բնակչության շուրջ 55-60 տոկոսի եկամուտները ցածր են աղքատության շեմից: Ընդ որում, բնակչության դրամական եկամուտների կազմում աշխատավարձի տնտեսակարար կշիռը չի գերազանցում 45 տոկոսը:

ԼՂՀ-ում բնակչության իրական եկամուտների փոփոխությունը 2000-2002թթ. տրվում է ստորև բերվող աղ-

ԼՂՀ բնակչության եկամուտները 2000 - 2002 թթ. <sup>2</sup>			
	2000	2001	2002
Բնակչության դրամական եկամուտները			
մեկ շնչի հաշվով, հազ. դրամ	145,0	161,0	175,6
Բնակչության իրական դրամական			
եկամուտները, տոկոսներով՝ նախորդ			
տարվա համեմատությամբ	114,5	109,1	109,9
Իրական աշխատավարձը, տոկոսներով՝			
նախորդ տարվա համեմատությամբ	109,1	100,1	105,1

յուսակում.

Այսուսակի տվյալներից պարզվում է, որ միջին իրական աշխատավարձի և բնակչության ողջ իրական եկամուտների կրճատումը սոցիալական ոլորտում լարվածության կուտակման միակ գործոնը չէ: Կարևոր հանգամանք է նաև եկամուտների կրճատման և տնտեսական աճի արդյունքների անհավասարչափ բաշխումը բնակչության տարբեր խմբերի միջև, որը խորացնում է անհավասարությունն ու բնակչության սոցիալական շերտավորումը:

Այս պարագայում աղքատությունը սահմանափակում է տնտեսական աճի համար կարևոր գործոնը՝ պահանջարկը: Ըստ եռթյան, տնտեսության իրական հատվածում աշխատող սուբյեկտներում ծավալում են արտադրողի շուկան, որի սպառողները սահմանափակ են արտադրին շուկաներում և երկրի ներսում՝ ոչ միայն արտադրանքի որակի և ցածր մրցունակության պատճառով, այլև վերոնշյալ անբավարար պահանջարկի գործոնի հաշվին:

Աղքատությունը ոչ միայն աշխատատեղերի բացակայության արդյունք է, այլ հետևանքը է նաև արտադրության տեխնոլոգիական հետամնացության և աշխատանքի խսիս ցածր արտադրողականության:

Անցումային ժամանակաշրջանում ծևափոխվեցին բաշխման հարաբերությունները, որի հետևանքով խորացավ հասարակության շերտավորումը: Սոցիալական բեկորացման հետևանքով նվազել է հանրապետության բնակչության միջին խավը, կտրուկ կրճատվել գնողունակությունը: Այսօր աղքատության դեմ բնակչությունն ստիպված պայքարում է արտագաղթի ճանապարհով: Այսպես՝ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2000թ. հանրապետությունից արտագաղթել է 709 մարդ, 2001թ.՝ 857, 2002թ.՝ 1138:

Կարծում ենք, որ առաջարկուն խնդիրների լուծումը պետության համար պետք է դարձնա սոցիալական ռազմավարական նպատակ:

## Օ Ո Ա Ռ Ե Ր Ա Ծ Ա Ծ Ա Ծ Ա Ծ Ա Ծ

- Մայ Մընասա, «Ասատուր Քիրիշյանի խապանական երեկութքը. լարերին զեփյուռանան հպող նրբություն» (արաբ.), «Ալ-Նահար», օրաթերթ, Բեյրութ, 03. 01. 2004 (լիբանանահայ կիթառիստի մենահամերգի մասին):

- Ադման Ջարբ, «Լիբանանի և արաբների չենացին Քնարիկ Մուրայյան. «Սասանակցելու եմ աշխարհի ուժեղագույն մրցաշարերին և շախմատը նախընտրում եմ ուսումնից»» (արաբ.): «Սադա ալ-Բալադ» օրաթերթ, Բեյրութ, 04. 01. 2004 (հարցագրույց):

- Անտուան ալ-Սաբաալանի, «Ամուրի մանկավարժը՝ Զավեն Մսքրյան» (արաբ.), «Ալ-Նահար» օրաթերթ, Բեյրութ, 10. 01. 2004 (Անտուան ալ-Սաբաալանի մասին):

- Նեմա Միհր, «Իրանի հող շրջանակի մեջ» (պարսկ.), «Իրան» օրաթերթ, Թեհրան, 02. 06. 2004 (ամերիկաբնակ իրանահայ արվեստագետի հողից կերտած գեղարվեստական ինքնատիպ գործերի մասին):

- Թոմաս Դը Վաալ, «Փորձել Վերջ տալ կովկասյան հակամարտությանը» (անգլ.), «Դը Ուոլ սթրիթ Զուրնալ», օրաթերթ, ԱՄՆ, 11. 05. 2004 (Արցախյան հակամարտության մասին է, ուր հեղինակը բացահայտում է Քի Կեսրում քննարկված նախագծի մի քանի մանրանասներ):

- Ուրեմտ Քյուրքյան, «Աշխարհի ամենաէժան վայրերը - Ղայաստան» (անգլ.), «Բադցեր Թրեվըլ» ամսաթերթ, Վաշինգտոն, ապրիլ, 2004:

Սակայն մինչև այժմ հստակ որոշված չեն այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք պետք է դրված լինեն սոցիալական քաղաքականության հիմքում:

Ժամանակի պահանջ է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» մշակումը, որի հիմնական նպատակը պետք է լինի աղքատության կրծատումը և հաղթահարումը: Աղքատության հաղթահարմանը կնպաստի տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը: Չնայած տնտեսական աճի հետևանքով կրծատվում են նաև վարձու աշխատատեղերը, այնուամենայնիվ, այդ կրծատումները կփոխադրուցվեն ինքնազբաղվածության էական աճով, ինչպես նաև վարձու աշխատողների և ինքնազբաղվածների եկամուտների առաջանցիկ աճով:

Տնտեսական աճ ապահովելու նպատակով պետք է խրախուսել փորձ ծերոներեցությունը, ապահովել գործարար միջավայր:

Երկրում աղքատության հաղթահար-

ման համար կարևոր նշանակություն ունի նաև պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը՝ կառավարման բոլոր նակարդակներում, այդ թվում՝ հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և դրա հետևողական իրականացումը: Անհավասարության վերացման նպատակով հիմնական գերակյալություն պետք է վարել նաև սոցիալական և եկամտային արդյունավետ քաղաքականություն:

Այսպիսով՝ պետությունն իր ակտիվ տնտեսական քաղաքականությամբ պետք է մշտապես փորձի մեղմել բնակչության կենսամակարդակի անկման հետևանքները և միջոցառումներ մշակի սոցիալական առաջնորդացի համար:

\* \* \*

1. ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Վիճակագրական տարեգիր, 2000-2002:

2. ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Վիճակագրական տարեգիր, 2000-2002:

11 ←

### Հահումյանը շահումյանցիների շուրջերին մնաց մրնունջ...

կոչ: Ի՞նչ կարող ես անել, փոքր են, չեն հասկանում՝ ո՞ւր են գնում, ինչո՞ւ են գնում, ի՞նչ է իրենց գլխին գալիքը...

Երկու գիշեր ճամփա կտրելով՝ գաղթականների քարավանը երրորդ օրը հասնում է Նապատ: Շատերը համոզված էին, որ դա ժամանակավոր փախուստ է, մի քանի օրից ամեն ինչ կխաղաղվի, ու մարդիկ նորից կվերադառնան իրենց տները: Մռավի փեշերին մոտենում է նրանց Շահեն Մեղրյան ու ասում. «Թուրքն արդեն մեր տեղը գիտե, վերադարձը վտանգավոր է, պետք է շարունակենք ճանապարհը»: Խոլ տնքոցով պատմում է Արփիկ մայրիկն ու թաշկինակով ծածկում թաց դեմքը...

Գնում էր քարավանը ամառային կիզիչ արևի ներքը՝ սար ու ձոր, անտառ ու քարափ հաղթահարելով: Թե քանի՞ օր են գնացել, Արփիկ մայրիկը դժվարացավ ասել:

Կորուստներով հասել են Մարտակերտի Ղաթերթ գյուղը՝ ճանապարհին թողնելով ծեր, հիվանդ, նույնիսկ կրծքի երեխաներ: Մարդկանց ուժը սպառվել էր: ճանապարհի տառապանքներին չդիմանալով՝ շատերն են մահացել: Նրանց թողել են անտառներում: Ու Արփիկ մայրիկն անուներ է

տալիս՝ իրեն հարազատ ու ծանոթ: Եսայան Մարգոն ամուսնու հետ մնացել է անտառում. մահացել են, թե՞ ընկել թշնամու ձեռքը... Անհայտ ենաւ Յովակիմյան Գերասիմի և նրա կնոջ ճակատագիրը: Այսպիսիք, ցավոք, շատ-շատ են...

Շահումյանի անկումց արդեն անցել է տասներկու տարի: Նրա կորուստը միսացող վերը է ոչ միայն շահումյանցիների, այլև յուրաքանչյուր հայորդու համար: Երկիր, որտեղ հայկական մշակույթի օջախներ են, դարերի ոտնահետքերով կանուքներ, խաչքարեր, ավանդույթներ... Երկիր, որտեղ Մռավա սար կա, լեռների փեշերին՝ ծաղկած մասրենի, նունի, իսկ մարդիկ հյուրասեր էին, սրտաբաց և դրանից անցնողի, ամեն բարև տվողի հետ պատրաստ էին կիսելու իրենց օրվա հացը: Բայց այսօր տխուր ու մոլոր դեգերում են աշխարհով մեկ, իրենց համար գերեզման փնտրում օտարության մեջ, գլուխները բարձին դնում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Մոսկվայում, ՀՀ-ում, բայց արթնանում իրենց հարազատ Մռավի փեշերին՝ Ղարաշինարում, Վերիշենում, Երքեջում և տուն՝ Շահումյան վերադարձալու հույսեր փայփայում...

**Ամայա Եղիգարյան**

# Նավթի գների անախաղեա աճը և պատճառները



**Ր**ունիսի 3-ին OPEC-ի (Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) անդամ երկրների նավթարդյունաբերության նախարարների բերության համաժողովում, միջազգային շուկայում նավթի գների աճը կասեցնելու նպատակով, որոշում ընդունվեց արտահանության ծավալը մեծացնել: Ըստ այս որոշման՝ արտահանության ծավալները մեծացվելու են երկու փուլով՝ հուլիսի 1-ից՝ օրական 2 միլիոն բարելով, իսկ օգոստոսի 1-ից՝ ևս 500 հազարով, այլ կերպ ասած՝ օգոստոսին արդեն OPEC-ի արտահանությունը կկազմի օրական 26 միլիոն բարել:

Հուլիսի 21-ին Վիեննայում OPEC-ի նավթարդյունաբերության նախարարները կրկին նիստ են գումարելու՝ հունիսին ընդունված որոշման արդյունքները քննարկելու նպատակով: Սակայն իրականում, ինչպես ապացուցել է պատմական փորձը, OPEC-ի անդամներն արտահանության հարցուն երբեք հավատարիմ չեն մնում ստանձնած պարտավորություններին և ընդունած որոշումներին, իսկ միջազգային շուկայում գների աճի միտում նկատելիս՝ յուրաքանչյուրը ծգուում է այլոց պարտաճանաշության հաշվին մեծացնել սեփական արտադրության ծավալը: Դա նշանակում է, թե ներկա դրությամբ OPEC-ը նավթ է արտադրում իր ողջ կարողությամբ: Ուստի խնդրո առարկա որոշումը, ինչպես նշում են նաև մասնագետները, կարելի է գնահատել լոկ իրեւ փաստի օրինականացում, հետևաբար միջազգային շուկայում առաջարկի ծավալները չեն մեծանալու: Թերևս հենց նշյալ պարագայով է պայմանավորված միջազգային շուկայում բարձր գների պահպանումը, որոնց աճը, նախորդ տարվա համեմատությամբ, կազմում է շուրջ 56 տոկոս: Առերևույթ այդ որոշումը շատ կարծ ժամանակահատվածուն մասամբ դրական արդյունք արձանագրեց: Սակայն օգոստոսի սկզբին արդեն միջազգային շուկայում արձանագրվեց նավթի գների ռեկորդային բարձրացումը. մեկ բարել (1 բարելը 132,5 լիտր է) նավթի գինը հատեց 43 դոլարի սահմանագիծը:

Փորձագետները, ստեղծված իրավիճակը հաճախ գնահատելով իրեւ «նավթային շոկ՝ սաղմում», նշում են, որ եթե նախագահ Զորջ Բուշի՝ Իրաքի վրա հարձակվե-

լու նպատակը այդ երկրի նավթին տիրանալու էր, ապա դա ձախողված պետք է համարել, քանզի պատերազմի «հաղթական» պարտից ավելի քան մեկ տարի անց, նավթի մեկ բարելի գինը միջազգային շուկայում դարձել է շուրջ 40 դոլար և, փաստորեն, հավասարվել 1990թ. Պարսից ծոցի առաջին պատերազմի նախաշեմի ռեկորդային գներին: Ավելին՝ մայիսի 31-ին Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած ահաբեկչությունների հետևանքով նավթի գները միջազգային շուկայում գերազանցեցին անգամ այդ ցուցանիշը. մեկ բարելի գինը կազմեց ավելի քան 42 դոլար: Մինչդեռ Սաուդյան Արաբիայի նավթարդյունաբերության նախարար Ալ-Նահմին հունիսի 2-ին շտաբեց միջազգային հանրության հավաստիացնելու, թե ահաբեկչությունների պատճառով իր երկրի նավթի արտադրությունը չի կրճատվելու (RFI ռադիոկայան, 2-ը հունիսի, 2004թ.):

Անդրադառնալով միջազգային շուկայում նավթի գների անախաղեա ածին, նշենք, որ փորձագետներն այն գլխավորապես պայմանավորում են Սիցին Արևելքում ստեղծված պատերազմական իրավիճակով, այս տեղ նավթարդյունաբերության կառույցների անվտանգության անապահովությամբ՝ ընդգծելով, որ դրա համար պատասխանատու է նախագահ Բուշը: Ասել է թե նավթի գների աճի գլխավոր պատճառները քաղաքական են: Ֆրանսիական «Լիբերասիոն» օրաթերթը, որի ուշադրության կենտրոնում են նավթի հարցերը, դեռևս մայիսի 14-ին գրել է, որ նավթի գների աճը հիմնականում բխում է աշխարհաքաղաքական զգնաժամերից՝ սկսած Վենեսուելայից մինչև Լիգան և Սաուդյան Արաբիայում իւլամական ահաբեկչությունների վերընթացը: Այս կերպ ասած՝ հաշվի առնելով փորձագետների տեսակետները՝ կարելի է նշել, որ, ընդհանուր առմանը, նավթի գների աճի հարցում նշանակալից դեր ունեն հետևյալ գործոնները. ա) Լիգերիայում ազգամիջյան իրադրության լուրջ սրացումը, բ) Վենեսուելայում քաղաքական մթնոլորտի շիկացնան մեծ հավանականությունը, որը կարող է հանգել համընդհանուր գործադրություն՝ նավթարդյունահանման ժամանակավոր դադարեցմանը, գ) Չինաստանում տնտեսական աճի բերումով

նավթի պահանջարկի կտրուկ մեծացումը. այս երկիրը, արևանտյան աղբյուրների համաձայն, անցյալ մեկ տարվա ընթացքում ծախսել է աշխարհում սպառված նավթի ավելի քան 1/3-ը: դ) Միացյալ Նահանգներում նավթագոտարանների արտադրության գգալի կրճատումը, հանգամանք, որը բացատրվում է սպառվող բենզինի համար որակական նոր փոփոխությունների պահանջով, ինչի պատճառով անհրաժեշտ է դարձել նավթագոտարանների տեխնիկական վերազինումը, ե) Ինդրոնեզիան նավթարտահանող երկրից վերածվել է ներմուծողի, իսկ դա նշանակում է՝ պետք է հեռանա OPEC-ից, հանգամանք, որը լուրջ հարված կլինի միջազգային շուկայում նավթի գները վերահսկելու առումով վերջինիս հնարավորություններին:

Հավելենք նաև, որ, եթե 70-ական թվականներին OPEC-ին էր պատկանում աշխարհում արտադրված նավթի շուրջ 50 տոկոսը, որը հնարավորություն էր ընծուում կազմակերպությանը միջազգային շուկայում վերահսկել նավթի գները, ապա այժմ մասամբ գրկվել է

**Փորձագետները նշում են, որ եթե նախագահ Զորջ Բուշի՝ Իրաքի վրա հարձակվելու նպատակը այդ երկրի նավթին տիրանալը էր, ապա դա ձախողված պետք է համարել, քանզի պատերազմի «հաղթական» ավարտից ավելի քան մեկ տարի անց, նավթի մեկ քարելի գինը միջազգային շուկայում դարձել է շուրջ 40 դոլար և, փաստորեն, հավասարվել 1990թ. Պարսից ծոցի առաջին պատերազմի նախաշեմի ռեկորդային գներին:**

այդ հնարավորությունից: Ավելին՝ տեսանելի ապագայում թերևս ավելի կփոքրանա այդ հնարավորությունը, քանզի կազմակերպության այլ անդամներ ևս կդադարեն նավթ արտահանել կամ նրանց արտահանումը կնվազի OPEC-ին անդամակցելուն սահմանված չափերից, ուստի հարկադրված կլինեն հեռանալ կազմակերպությունից: Ահա թե ինչու ավելի հնչեղություն ունեն, այն տեսակետները, որոնց համաձայն OPEC-ը դիտվում է իրեն անցյալից ժառանգված, արդյունավետությունը կորցրած կազմակերպություն, որը ծգտում է պատճեշել նավթի ոլորտում ազատ շուկայի ստեղծումը, տեսակետ, որը շրջանառության մեջ մտավ 1997-98թթ., երբ երկար ժամանակ OPEC-ին չէր հաջողվում կասեցնել նավթի գների անկումը միջազգային շուկայում:

Խոսելով տնտեսական գործոնի մասին՝ հարկ է նշել նաև, որ նավթի գների աճը առավելապես պայմանավորված է Միացյալ Նահանգների տնտեսական աճով, ինչը սովորաբար հանգում է այդ երկրում էներգակիրների սպառնան աճի: Բացի այդ՝ Վաշինգտոնը ոչ միայն հրաժարվում է նավթի ռազմավարական պաշարների օգտագործումից՝ գների նվազեցման նպատակով, այլև 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո Բուշի վարչակազմը նավթի ռազմավարական պահեստների վերակառուցումն ու դրանցում նավթի պաշարների կուտակումը, հավանական միջազգային ճգնաժամերը դիմակայելու նկատա-

ռումով, առաջնային խնդիր է դարձրել, որը միջազգային շուկայում կտրուկ մեծացրել է դրա պահանջարկը:

Հավելենք, որ փորձագետներից ոմանք նաև դրական պահեր են տեսնում նավթի գների աճի բացասական հետևանքների կողքին: Ֆրանսիական «Լիբերասիոն» օրաթերթի մեկնաբան Պատրիկ Սավարիեն մայիսի 7-ին գրել է, որ թեև նավթի գների այդորինակ աճը վնասաբեր է համաշխարհային տնտեսության համար, սակայն դա թերևս Արևոտքին կիրախուսի խնայողաբար օգտագործել էներգակիրները և առավել լոջությամբ վերաբերվել էներգիայի այլ աղբյուրներ ձեռք բերելու հարցին:

### **Միջազգային շուկայում նավթի գների աճը համընթաց է ԱՌ շահերին**

Այսուհանդերձ, փորձագետներից ոմանք, չժամանելով իրաքան դեպքերի և աշխարհաքաղաքական ճգնաժամների ազդեցությունը նավթի գների աճի վրա, միաժամանակ շեշտում են, որ դրա գլխավոր պատճառն անմշակ նավթի գների արհետականորեն բարձրացումն է Միջազգային Նահանգներում: Ըստ երևույթին հենց այս համգանքով էր պայմանավորված Վենեսուելայի նավթարդյունաբերության նախարարի հայտարարությունը՝ OPEC-ի բեյրության համաժողովում: Նա ընդգծեց, որ նավթի արտադրությունը մեծացնելու վերաբերյալ կազմակերպության որոշումը, որևէ ազդեցություն չի ունենալու միջազգային շուկայում նավթի գների վրա, քանզի գների աճն առաջարկի պակասից չի բխում: Իսկ համաժողովը հյուրընկալող երկրի՝ Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Զարիդին նշեց, որ նավթի գների աճի հարցում որևէ օրյեկտիվ, իրական պատճառ գոյություն չունի (FRI ռադիոկայան, 3-ը հունիսի, 2004թ.): Այլ կերպ ասած՝ հաշվի առնելով որոշ հանգանաքներ, այդ թվում այն, որ նախագահ Բուշի վարչակազմը, սերտ կապեր ունենալով նավթային խոշոր ընկերությունների հետ, իսկ սրանք իրենց հերթին գգալի դեր ունեն նախագահական և Կոնգրեսի ընտրություններում, ի սկզբանե շահագրգիռ է եղել նրանց շահերը պաշտպանելու, թերևս իրավացի են նրանք, ովքեր նավթի գների աճը բխեցնում են Միջազգային Նահանգների նավթային քաղաքականությունից: Միջազգային շուկայում նավթի գների աճը ոչ ոչ միայն ի վեհական նավթային ընկերությունների չէ, այլև իրականում բազմակի մեծացնում է նրանց շահույթը: Դա են վկայում անցյալ դարի 70-80-ական թվականների էներգետիկ ճգնաժամները (Ben H. Bagdikian, «The Media Monopoly», Beacon Press, Boston, 1990): Տվյալ ժամանակահատվածում Միացյալ Նահանգներում նավթային ընկերություններն իրենց հսկայական շահույթի փաստը, գլխավորապես օգտագործել են կապիտալ ներդրողների ուշադրությունը գրավելու նպատակով: Սակայն երբ նավթային ընկերությունների կամքին հակառակ այդ մասին տեղեկությունները հայտնի դարձան նաև հասարակությանը, վերջինս խիստ զայրություն վերաբերվեց դրան: Հարցումների արդյունքները ցույց տվեցին, որ բնակչության 25 տոկոսն էներգակիրների ազգայնացման կողմնակից է (նույն աղբյուրով): Այսինքն՝ միջազգային շուկայում նավթի գների աճը լիովին համապատասխանում է նավթային խոշոր ընկերությունների շահերին: Միջազգային շուկայում գներն աճել են շուրջ 56 տոկոսով, մինչեւ ամերիկյան սպառողի համար՝ ավելի քան 300: Ահա թե ինչու Վաշինգտոնը շահագրգիռ չէ միջազգային

շուկայում կասեցնելու նավթի գների աճը, որը, ըստ երևութին, շարունակվում է, և որոշ կանխատեսումների համաձայն՝ մեկ բարեկ գինը մոտենալու է 50 դոլարի սահմանագծին: Հենց նշյալ հանգամանքով պետք է բացատրել նաև այն, որ Վաշինգտոնը նավթի գների նվազեցման ուղղությամբ որևէ լուրջ քայլ չի կատարում, այլապես Սառույան Արարիայի (նա տնօրինում է աշխարհում հայտնաբերված նավթի պաշարների շուրջ 56 տոկոսը և արտահանողների ցանկում՝ օրական 8 միլիոն բարել, գրադացնում է առաջին հորիզոնականը) վրա ճնշում գործադրելով, աջակցելով կապահանջեր մեծացնել արտահանության ծավալները, ինչպես անհրաժեշտության դեպքում բազմից տեղի է ունեցել, այդ թվում՝ 2000 թվականին՝ Բիլ Ռունքոնի նախագահության օրոք, եթե ռազմավարական պահեստների դռները ևս բացվե-

**«Հայր Բուշը և նրա որդիները թե՛ Կոնգրեսի անդամության և թե՛ նահանգապետության ժամանակահատվածներում՝ 30 տարվա ընթացքում, Սառույների ընտանիքից 1 միլիարդ 476 միլիոն դոլար են ստացել: Այդ գումարը հատկացվել է Բուշի ընտանիքին՝ նրանց ընկերություններում ներդրումների, ընտրարշավներին կանխիկ աջակցելու, անգամ այդ ընտանիքի անդամների գրոսաշրջիկական ուղևորությունների ծախսերը հոգալու տեսքով» («Ֆիզարո», 2-ը հունիսի, 2004թ.):**

ցի՞ն: Մինչդեռ այսօր, ինչպես նշում են մասնագետները, Սառույան նահանգները, մեծացնելով նավթի պահեստավորման ծավալները, միջազգային շուկայում կտրուկ մեծացրել է պահանջարկը (RFI ռադիոկայան, 18-ը մայիսի, 2004թ.): Թերևս դա է պատճառը, որ փորձագետները նշում են, թե էր Ոյխարդ լավագույն դեպքում ի վիճակի կին օրական միայն մեկ միլիոն բարելով ավելացնել իր արտահանությունը, այն էլ՝ 2-3 ամիս հետո, որը չի փորկի իրավիճակը: Ավելին՝ փորձագետներն ընդգծում են, որ արտադրության աճը խնդրի լուծում չէ, քանզի սովորական պայմաններում միջազգային շուկայում նավթի առուժախի օրական ծավալը չորս անգամ գերազանցում է սպառնան ծավալները, մինչդեռ այսօր այն գերազանցում է քսան անգամ («Լիեռասիոն», 14-ը մայիսի, 2004թ.):

Այս առնչությամբ հետաքրքիր են նաև 2003թ. նոյեմբերին BBC ռադիոկայանի՝ նավթի խնդիրներին նվիրված վերլուծական հաղորդաշարում արտահայտված տեսակետները, որոցից մեկը հատկացվել էր Վաշինգտոն էր Ոյխարդ փոխհարաբերություններում նավթի գործոնին: Նշյալ վերլուծականում շեշտվում էր. «Երկորորդ համաշխարհային պատերազմը Միացյալ Նահանգների համար շրջադարձային էր, որովհետև վերջինս հասկացավ, որ իր նավթի պաշարներն սպառվում են, իսկ նախագահ Ֆրենկլին Ռուզվելտը, այդ ոլորտում լինելով խիստ խելամիտ, այցելեց Սառույան Արարիա և, բանակ-

ցելով Սառույան հարստության հիմնադիր Արդուլ Ազիզ բեն Սառույի հետ, համաձայնության եկավ, որ Միացյալ Նահանգները հովանավորելու, պաշտպանելու է թեն Սառույին և այդ հարստության հաջորդ միապետներին, որի դիմաց էր Ոյխարդ երկու նավթը վաճառելու է Վաշինգտոնին» (BBC ռադիոկայան, 8-ը նոյեմբերի, 2003թ.): Ի դեպ, ըստ նշյալ աղբյուրի, 1960 թվականին Միացյալ Նահանգների նավթի պահանջարկի մեկ երրորդն ապահովվել էր ներմուծման հաշվին, իսկ 1973-ին՝ երկու երրորդը:

Ակնհայտ է նաև, որ միջազգային շուկայում նավթի աճից առավելապես օգտվում է Սառույան Արարիայում իշխող ալ-Սառույների հարստությունը, որն ըստ Միացյալ Նահանգներում լույս տեսած «Աշխարհի երկու հզոր ընտանիքների անտեսանելի կապերը» գրքի հեղինակի՝ սերտ կապեր ունի Բուշի ընտանիքի հետ: Ֆրանսիական «Ֆիզարո» օրաթերթը, հենվելով նշյալ գրքի վրա, գրել է. «Հայր Բուշը և նրա որդիները թե՛ Կոնգրեսի անդամության և թե՛ նահանգապետության ժամանակահատվածներում՝ 30 տարվա ընթացքում, Սառույների ընտանիքից 1 միլիարդ 476 միլիոն դոլար են ստացել: Այդ գումարը հատկացվել է Բուշի ընտանիքին՝ նրանց ընկերություններում ներդրումների, ընտրարշավներին կանխիկ աջակցելու, անգամ այդ ընտանիքի անդամների գրոսաշրջիկական ուղևորությունների ծախսերը հոգալու տեսքով» («Ֆիզարո», 2-ը հունիսի, 2004թ.): Ուստի եթե նշվածը համապատասխանում է իրականությանը, ապա նավթի գների աճը, ինչ-որ տեղ նաև փոխհատուցում է Սառույներին:

### **Նավթի գների աճն անհրաժեշտ էր նաև Բաքու-Զեյխան նավթամուղի կառուցման համար**

Հատկանշական է, որ նավթի գների աճը խիստ անհրաժեշտ էր նաև Բաքու-Զեյխան նավթամուղի կառուցման համար: Այդ գործում առավելապես շահագրգիռ է ԱՄՆ-ը: Ինչպես հայտնի է՝ 1997թ. սեպտեմբերից միջազգային շուկայում արձանագրվեց նավթի գների անկում, որը շարունակվեց մինչև 1999թ. սկիզբը:

**Հատկանշական է, որ նավթի գների աճը խիստ անհրաժեշտ էր նաև Բաքու-Զեյխան նավթամուղի կառուցման համար: Այդ գործում առավելապես շահագրգիռ է ԱՄՆ-ը: Ինչպես հայտնի է՝ 1997թ. սեպտեմբերից միջազգային շուկայում արձանագրվեց նավթի գների անկում, որը շարունակվեց մինչև 1999թ. սկիզբը:**

գային շուկայում արձանագրվեց նավթի գների անկում, որը շարունակվեց մինչև 1999թ. սկիզբը: 1998թ. դեկտեմբերին նավթի մեկ բարեկ գինը կազմեց ընդամենը 10 դոլար, ինչը 1997թ. համենատությամբ 50 տոկոս անկում էր:

Այս հանգամանքը կասպյան նավթի արտահանությունը դարձրեց ոչ շահեկան: Եթե միջինարևելյան երկու ներից արտահանվող նավթի մեկ բարեկի հնքանարժեքը շուրջ մեկուկես դոլար է, կասպյան ավագանում այն հինգ դոլար է, չորսից-հինգ դոլար էլ կազմենա այն միջազգային շուկա տեղափոխելու ծախսերը, եթե, իհար-

կե, կառուցված լիներ Բաքու-Ձեյհան նավթատարը, փաստ, որի պատճառով, 1998թ. ընթացքում, արևմտյան խոշոր ընկերությունները ադրբեջանական կոնսորցիումներում մեկը մյուսի հետևից հրաժարվում էին իրենց անդամակցությունից: Նշանակում է նշալ խողովակաշրի կառուցված հնարավոր դարձավ լոկ միջազգային շուկայում նավթի գների աճի շնորհիվ: Ուստի, հրաքյան դեպքերի բերումով, միջազգային շուկայում նավթի գների աճը ոչ միայն չի կարելի գնահատել որպես Սիացյալ:

**Դատկանշական** է, որ նավթի գների աճը խիստ անհրաժեշտ էր նաև Բաքու-Ձեյհան նավթամուղի կառուցման համար: Այդ գործում առավելապես շահագրգիռ է Սիացյալ նահանգները:



Նահանգների պարտություն, այլև այն լուրջ հաջողություն է թե ամերիկյան ընկերությունների շահերը պաշտպանելու և թե՝ Բաքու-Ձեյհանի կառուցման տեսանկյունից, այլապես դրա կառուցման հնարավորությունը մեծ չէ, եթե ոչ՝ անհնարին:

Ինչ վերաբերում է միջազգային տնտեսության, մասնավորապես խոշոր արդյունաբերական երկրների վրա նավթի գների ազդեցությանը, ապա, մասնագետների կարծիքով, դա մեծ չէ և տարբեր երկրներում (կախված այն բանից, թե տվյալ երկրում արդյունաբերության որ ծյուղն է զարգացած), տարբեր չափի է լինելու: Քանզի որոշ ծյուղեր, այդ թվում՝ ավիացիան ու քիմիականը, առավել մեծ ծավալներով են նավթ սպառում: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում յուրաքանչյուր բարել նավթի գնի երեք-չորս դոլար աճը, երկու տարվա ընթացքում կիանգեցնի 0,1 տոկոս արժեզրկման: Ուստի նավթի գների հիսուն տոկոս աճի դեպքում արժեզրկումը կազմելու է կես տոկոսից պակաս: Ավելին՝ Եվրոպայի համագործակցության և տնտեսական առաջընթացի կազմակերպության նախահաշիվների հիման վրա կատարված կանխատեսումներն արդյունաբերական հզոր տերությունների համար լավատեսական են: Օրինակ՝ Չինաստանի տնտեսական աճը 2004 թվականին կազմելու է միջինը 9, իսկ Ասիայի հարավ-արևելյան երկրներին՝ 5 տոկոս, Սիացյալ նահանգներում՝ 4,7, Մեծ Բրիտանիայում և ճապոնիայում՝ 3, իսկ Եվրոյի գոտում՝ 1,6 տոկոս:

Դավելենք, որ Եվրոյի գոտու հարցում փորձագետների կանխատեսումներն առավել լավատեսական են 2005թ. առնչությամբ՝ 2,6 տոկոս աճի կանխատեսումով (RFI ռադիոկայան, 15-ը մայիսի, 2004թ.): Հետևաբար նավթի գների աճը չի հանգեցնի այնպիսի տնտեսական ճգնաժամի, ինչպիսին անցյալ դարի 70-ական թվականներին էր, քանզի, մասնագետների կարծիքով, այն ժամանակական պայմանները լիովին տարբեր էին ներկայից:

OPEC-ը (70-ական թթ. տնօրինում էր նավթի արտահանության 60 տոկոսը, իսկ այսօր՝ շուրջ 34) գլխավոր նավթի արտահանողն էր, որն ի զորու էր և աշխարհին հանկարծակի բերել: Չկար նաև նավթի խոշոր պահետավորում, մինչդեռ այսօր միայն Սիացյալ նահանգների պահետավորած անմշակ նավթի պաշարները կազմում են 295 միլիոն, իսկ բենզինին՝ 200 միլիոն բարել (RFI ռադիոկայան, 15-ը մայիսի, 2004թ.):

Ինչպես նշվեց, նավթի գնաճի բացասական արդյունաբերական խոշոր երկրների տնտեսության վրա անցան է, թերևս դրա վառ ապացույցը կարող է լինել ԱՄՍ տնտեսության շարունակվող վերելքը: Ըստ Սիացյալ նահանգների ԶԼՍ-ների՝ ընթացիկ տարվա մայիսին այդ երկրում 248 հազար նոր աշխատատեղ է ստեղծվել, ինչը ռեկորդային է և գերազանցել է բորսային կանխատեսումները, որոնց համաձայն մայիսին ստեղծվելու էր առավելագույն 216 հազար նոր աշխատատեղ: Ապրիլին 344 հազար նոր աշխատատեղ է ստեղծվել, իսկ մարտին՝ 353 հազար, ասել է թե երեք ամսվա ընթացքում 947 հազար նոր աշխատատեղ է ստեղծվել, ցուցանիշ, որն անախաղեա է վերջին չորս տարում: Ի դեպ, նոր աշխատատեղներն ստեղծվել են երկիր տնտեսության բոլոր, այդ թվում՝ առևտորի, շինարարության և արտադրության բնագավառներում, ընդ որում՝ մայիսի ցուցանիշը արտադրության ոլորտում՝ 32 հազար տեղ, և ռեկորդային է (ամերիկյան «Ֆարոդ» ռադիոկայան, 5-ը հունիսի, 2004թ.): Այլ կերպ ասած՝ միջազգային շուկայում նավթի գների անախաղեա աճի պայմաններում Սիացյալ նահանգների տնտեսությունը բուռն վերելք է ապրում, իսկ բենզինի գների աճով պայմանավորված կյանքի բանկացումը այդ երկրում թերևս աննկատելի է և լուրջ հարված չէ միջին խավի ընտանեկան բյուջեին: Ուստի այն չի առաջացրել ամերիկացիների դժգոհությունը, մի հանգամանք, որը նախագահական ընտրություններին կգործի ի շահ Բուշի: Մինչդեռ զարգացող՝ առքատ երկրներում եներգակիրների գների աճի հարվածը բնակչության մեծամասնության կենսամակարդակի վրա միագանայն զգալի է: Դա առնվազն մենք՝ հայերս, մեր մաշկի վրա ենք գգում:

Հետևաբար կարելի է ասել նաև, որ նավթի գների աճը հարուստներին ավելի է հարստացնում, իսկ աղքատներին՝ ավելի աղքատ դարձնում:

## ԷՄՍԱ ԲԵԳԻՇԱԱՅԱՆ

16. 06. 2004

**3. 4. - Ինչպես և ենթադրվում էր, նավթի գների աճը շարունակվեց: Օգոստոսի սկզբին միջազգային շուկայում արձանագրվեց նավթի գների ռեկորդային բարձրացում. 1 բարել նավթի գինն օգոստոսի 13-ին հասեց 46,5 դոլարի սահմանագիծը, իսկ օգոստոսի երկրորդ կեսին՝ 50 դոլարի: Սակայն դա ոչ միայն չի անդրադարձել զարգացած արդյունաբերական երկրների տնտեսության վրա, այլև հուլիսին Սիացյալ նահանգներում գործազրկության նվազման միտում է արձանագրվել, իսկ Եվրոյի գոտու երկրներում, որտեղ զարգացման տեմպերն ակնհայտուն գիշում են զարգացած այլ երկրներ, ակնհայտ է դրական տեղաշարժը:**

18. 08. 04

## «ՊԱՏՐԱՍ ԼԻՆԵԼ ԱՄԵԼ ԻՆՉԻ»

**S**արածքների բաշխում աշխարհում միշտ է տեղի ունեցել: Այսօր այդ երևոյթն այլ կերպ է կատարվում: Ոչ ոք զգիտե, թե ինչպես կզարգանան իրադարձությունները, և ներ տարածաշրջանում տարածների նոր վերաբաշխում կկատարվի՝ թե՞ ոչ:

Մեր կարծիքով հնարավոր է և տարածների վերաբաշխումը, և այլայլ պետությունների փլուզումը, և նոր երկրների ստեղծումը և այլն: Քսան տարի առաջ ոչ ոք չէր սպասում, որ ԽՍՀՄ կփլուզվի, և շատ ազգեր ազատություն կստանան...

Մենք անպայման պետք է նկատի ունենանք նման օրինակները, որովհետև կորցրել ենք մեր պատմական տարածքների գործե կեսը: Նման իրավիճակում հայտնվող յուրաքանչյուր երկիր իր ապագայի համար հոգում է գաղափարակե՝ քարոզչական ճանապարհով և, ի վերջո, նաև իր պատմագործական համար:

Աշխարհը բռնել է ժողովրդավարացման ուղին, իսկ նման ծգուում անպայման օրակարգում կրնեն և մեր հարեւանը, և մեր բարեկամ Թուրքիան: Թուրքիան գուցեն փլուզվի: Դա ցավախի կլինի նախ այն պատճառով, որ նա մեր բարեկամն է և ոչ թե՝ թշնամին: Երկրորդ՝ Թուրքիայի փլուզումը տեղի չի ունենա խաղաղ և առանց ցնցումների, ավելի ծիշտ՝ դրա հետևանքով հականարտություն կծագի հայերի, քրդերի և բուրքերի միջև: Երրորդ՝ Թուրքիայի փլուզման հետևանքով մեր տարածաշրջանում կիայտնվեն երկու ագրեսոր՝ Հայաստանը և Թրոստանը, որոնք ծգուում են որքան կարելի է շատ տարածներ զավթել (Թրոստանի պարագայում դա հասկանալի է. չէ՞ որ նրանք երբեւ պետականություն չեն ունեցել):

**P**ոդերի գաղափարախոսությանը քաջածանորները կհամաձայնեն, որ պատմագրական, ինչպես նաև գրական և այլ դպրոցներ չունենալու պատճառով նրանց գաղափարախոսությունը հիմնվել է միայն ախորժակի վրա: Մենք շատ լավ ենք հասկանում, որ ամեն մի ժողովուրդ պետք է ունենա ինքնորոշման իրավունք, սեփական պետություն և այն, բայց քրդերի ախորժակը շատ մեծ է, և վտանգ կա, որ ուտելիս այն էլ ավելի կրացվի: Քրդերի միգրացիայի (տեղաշարժերի - խմբ.) քարտեզներին նայելիս նարդ ականա շփորչում է. ըստ նրանց քարոզության՝ քրդական են Մեսխեթի մի հատվածը, Երզրումը, Թորթումը, Օլթին, Կարսը, Արդահանը... Մինչդեռ այդ բոլորը վիացական հողի են, չնայած նրանք բարիդրացիական

տրամադրություն են դրսնորում լազերի ու մեսխերի նկատմամբ՝ ասելով. «Մենք պայքարում ենք ոչ միայն քրդերի, այլ նաև քուրքահպատակ վրացիների ազատագրման համար»: Բայց զարմանալի է՝ ինչպես պետք է պայքարեն մեր համերկրացիներին ազատագրելու համար, երբ ազք են դրել մեր հող ու ջրին: Նրանց քարոզության համաձայն՝ Վրաստամին են պատկանում միայն Տրավիզոն-Քայխեյի երկրամասը, Ողակ-ի երկրամասը՝ մինչև Վրաստամի այսօրվա սահմանը (ներայալ՝ հյուսիսային Լացիստանը), ճորոտի կիրճը... Ինչ խոսք, այնուամենայ-նիվ, շնորհակալ ենք, որ գոնե մի փոքր հատ-ված մեզ



«քրողեցին», որ Տրավիզոնն ու Լազիստանն ամբողջությամբ չհայտարարեցին իրենցը: Մենք ճանաչում ենք քրդերի ազգային իրավունքները, և Վրաստամը հնարավորինս ամեն կերպ աջակցում է մեր երկրում ապրող այդ ազգի ներկայացուցիչներին: Բայց մեր պետությունը չի խառնվի նրանց ծրագրերին: Եթե Թուրքիան մշակութային ինքնավարություն տա այնտեղ ապրող քրդերին ու վրացիներին, մենք միայն կողղունենք այդ փաստը: Մենք շահագործված ենք մեր տարածաշրջանի խաղաղությամբ: Բայց եթե փլուզվի Թուրքիան, մենք պետք է պատրաստ լինենք պաշտպանել մեր շահերը և կանխել տարածաշրջանին սպառնացող վտանգը:

Նշենք նաև, որ քրդերն իրենց քարտեզներում Հայաստանին էլ ոչինչ չեն թողել՝ ոչ Կանա լին ավազանը, ոչ Արարատը, ոչ Անին...

**R**այերը քրդերին շատ են նման ոչ միայն իրենց մարդարանական տեսակով, այլև ախորժակով: Նրանց միջև կան նաև ազգակցական կապեր. շատ են ուժացվել: Բայց առանց որա էլ հայտնի է հայերի մեծ ախորժակը: Նրանք միշտ ծգուել են Կովկասում առաջին լինել, թեպետ պատմականութեն ոչնչի չեն հասել: Զնայած այսօր Հայաստան էլ մեր բարեկամն է, բայց նա մեզանից զավթել-յուրացել է մեր պատմական հայրենիքի մի հսկայական երկրամասը՝ շուրջ 3812 քառ. կմ տարածք. Լոռի-Տաշիրը կամ Գուգարաց եր-

կիրը, որ քվեմո քարթիի մի մասն է՝ վրացական հարթավայրը:

Ցավոք, ոչ վաղ անցյալում, հայերը, արխազներն ու ռուսները կողդ-կողդի պայքարում էին մեր դեմ Վրբազագիայում՝ վրացական հինավորց հողի վրա: Դայերը բացաձակապես անհասկանալի և լվատի հավակնություններ ունեն Սամցին-Զավախեթիի նկատմամբ: Իսկ ողջ Տայքը, Կարսը, Երզրումը, Սպերը, Տրավիզոնը ամենատարբեր բացատրություններով ու մեկնաբանություններով կայսերական երկրամասեր են համարվում աշխարհի բոլոր հանրագիտարաններում և բարաններում: Ցենց վերջերս էլ հաջողացրին (ինչպես երևում է՝ կաշառքով), այսպես կոչված «Ռուսական ուղղափառ հանրագիտարանում» խանձրան, խախովին և այլ սուլը վրացական պատմական հուշ-

արձաններ ներկայացնել իբր հայկական:

Թուրքիայի փլուզման դեպքում տարածաշրջանը կվտանգվի հայոց գաղափարախոսության պատճառով (ընդգծում մերն է - խմբ.): Բացառվում է հայերի համաձայնությունը քրդերի հետ, և եթե հաշվի առնենք 1918-1921թ. փորձը, մենք էլ կունենանք հիմնախմնիրներ, որոնք չեն լուծվի բանակցություններով: Ով լավ գիտ այն ժամանակվա պատմությունը, կհամաձայնի՝ անհրաժեշտ է, որ մենք կրկին ինաստոնություն դրսենորնենք՝ հաստատելու ծշմարտությունը. չէ՞ որ Կովկասում պատմականուն միշտ մենք ենք եղել առաջնորդողը: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է Վրաստանում ծավալել գիտագաղափարախոսական լայն աշխատանք և պատրաստ լինել անեն ինչի:


**«Զորջիան թայմ»**  
Թթիլսի, թիվ 15, 15-22. 04. 2004

**R. Q.** - Ցավոք, վերջին շրջանում վրացական մամուլը հեղեղված է նման «մարգարիտներով» (պարերաբար կներկայացնենք նույշներ): «Վարդերի» հեղափոխության հարթական գաղափարախոսական առաջնորդող վերջը Թուրքիայում ի լուր աշխարհի հայտարարեց, որ իր քաղաքական իդեալը Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն է (հավանաբար ուսումնառության էր գնացել):

Դժբախտաբար, մեր պատմաբանների վերաբերմունքն այս հարցին չի կարելի հավուր պատշաճի համարել:

**«Ծրջադար»**

# «ԱՅՆ, ԻՆՉ ՉԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԴՐԱ ՏԵՌԸ ՉԵՆՔ...»



19-րդ դարում Թիֆլիսին տրված «Կովկասի Փարիզ» արտահայտությունը շատերին է հայտնի: Իսկ ովքե՞ր են կառուցել այն, դարձրել նման փառքի արժանի: «Որևէ քաղաքի կառուցապատումը, քաղաքաշինության օրենքների համեմատ զարգացումն ու բարգավաճումն ուղղակիորեն պայմանավորված, կախված ու շաղկապված է քաղաքի առաջին դեմքի՝ քաղաքագլխի ծավալած գործունեության հետ», - «Թիֆլիսի քաղաքագլուխները» գրքում գրել է Յայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության երևանի գրասենյակի պատասխանատու Սամվել Կարապետյանը:

Բուն նյութին նախորդած «Երկու խոսքում» նա մեջբերում է «Փորձ» ամսագրից մի արտահայտություն՝ գրված 1870-ական թվականների վերջին. «Յայր իսկեց Թիֆլիսը ոչ վրացոց, այլ պարսից, թուրքաց և գերմանացոց ծեռքեն և այդ՝ ոչ թէ անօրէնութեամբ, նենգ հնարներով ու մռայլ գիշերուայ ժամանակ, ոչ, ոչ, այլ արդար վաստակով, արդար փողերով, արթուն խելքով ու պայծառ օրուայ միջոցին»: Ի՞նչ կապ ունեին հայերն այս գործում ընդհանրապես:

- Պարոն Կարապետյան, Դուք եօակի արժեքավոր գործ եք կատարել՝ ուսումնասիրելով Թիֆլիս քաղաքի պատմությունը: Քանի որ Ձեր աշխատությունը հետարարձ հայացք է պատմությանը, սկսենք Ձեր օգտագործած պատմական սկզբնադրյուրներից, Թիֆլիսի մասին պատմական առաջին վկայություններից:

- Թիֆլիսն Անդրկովկասի հնագույն քաղաքներից է: Նրա մասին առաջին հիշատակությունը և սկզբնադրյուրներն ինձ հետաքրքրել են այլ տեսանկյունից: Շատերից և հաճախ էի լսում՝ Թիֆլիսը հայաքաղաք է՝ հայերն են կառուցել: Ինձ հետաքրքրի էր՝ որքանով էին այլ արտահայտությունները համապատասխանում իրականությանը: Մյուս կողմից՝ գրականության մեջ երեմն հանդիպում էին հայերի անուն-ազգանուններ, ովքեր տարբեր ժամանակներում Թիֆլիսում քաղաքագլուխ են եղել: Վեց-յոթ տարի առաջ ին հետաքրքրությունն այնքան մեծացավ, որ որոշեցի հավաքել նրանց անունները: Այս ժամանակ չէի մտածում, որ դա նույնիսկ գրի կվերածվի:

Առաջին վկայությունները, որոնք առկա են գրավոր աղբյուրներում, վերաբերում են 12-րդ դարի երկրորդ կեսին: Շահարի կամ ամիրայի պաշտոնը (այն ժամանակ այդպես էր անվանվում քաղաքագլուխը) վարել են Արծրունյաց տոհմի ներկայացուցիչները: Յայտնի են Քուրդ Արծրունին, Վասակ Արծրունին, Շաղին կամ Բաղին անունով մեկը՝ 13-րդ դարում: Սա Վրաստանի հզորագույն շրջանն էր:

Դա քաղաքագլուխ ունենալը պայմանավորված չէր քաղաքում հայ ազգաբնակչության թվաքանակով: Օրինակ՝ 19-րդ դարի երկրորդ կեսին հայերը քաղաքում 40 տոկոսից ավել էին, բայց քաղաքագլուխները հայեր էին:

- Ինչո՞վ էր պայմանավորված այդ փաստը:

- Սա քաղաքաշինական դարավոր մշակույթ ունեցող ազգի ֆեռունեն է: Նման մշակույթ կրողները միայն կարող էին և ի վիճակի ստանձնել այդ պաշտոնը և կառավարել, շենացնել քաղաքը:

- Եվ դա՝ ոչ իրենց հայրենիքում:

- Թիֆլիսը Յայստանի գավիթն է, թեև Մեծ Յայքի սահմանից դուրս է: Նրա աշխարհաքաղաքական դիրքը, առևտրատնտեսական և ճանապարհային ուղիների հանգուցակետ լինելու հանգամանքները նպաստել էին, որ հայերն այնտեղ լայն գործունեություն ծավալեին: Յայեր այնտեղ եղել են քաղաքի հիմնադրման պահից: Այսինքն՝ որ

պես քաղաքային բնակավայր՝ առաջին հերթին հայերով է բնակեցվել: Վրացի ժողովուրդն արհասարակ բաղկացած է եղել Երկու դասից՝ ազնվականությունից և գյուղացիությունից (մինչև ուշ միջնադար): Ազնվականությունն էլ ապրում էր օյլուղում:

- Այսինքն՝ Վրաստանում քաղաքացիների դասը կազմել են հայե՞րը:

- Մինչև Ռուսաստանի տիրապետության տակ հայտնվելը և նոյնիսկ մինչև 19-րդ դարի վերջը բուն Վրաստանում մեծ թե փոքր քաղաքները, ճնշող մեծամասնությամբ, հայաբնակ էին, հայաքաղաքներ էին:

- Ժամանակի ընթացքում ի՞նչ փոփոխություններ է կրել վրացական քաղաքների երիկական կազմը:

- Ցավոք, միջնադարի մասին նման տեղեկություններ չկան: Սակայն առկա են ցարական իշխանությունների՝ պարբերաբար անցկացրած մարդահամարների նյութերը: 19-րդ դարի 20-ական թթ. Թիֆլիսում հանգրվանեցին նաև գերմանացիներ: Կային նաև քրդեր, ասորիներ, թաթարներ, ռուսներ: Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո չինովների ռուսներ էին: 1840թ. քաղաքային խորհրդի՝ Դումայի անձնակազմը, բացի մեկ հոգուց, որ ռուս էր (որպես հսկող աչք և ականջ), հայեր էին: 1865թ., երբ առաջին անգամ ոչ տեղացի հայը՝ Գալուստ Շերմազանյանցը, ընտրվեց քաղաքագլուխ, բնիկ հայերը, որ «մորքալաք» էին կոչվում, ընդգետներ և ապստամբության նղեցին համբար դասին (նոյնիսկ գոհեր եղան, իսկ քաղաքագլուխը մի կերպ փախավ): Բախումն իրականում բնիկ և ոչ բնիկ հայերի միջև էր: 300 և ավելի տարի քաղաքում ապրողները համարվում էին բնիկ, իսկ դրանից պակաս ժամանակ բնակվողները՝ ոչ բնիկ՝ «ախալմոսուլ»:

- Ո՞վ էր նշանակում քաղաքագլուխներին:

- Զեհն նշանակում, այլ ընտրվում էին: Արծրունիներին հաջորդեց Բեիրության տոհմը: 17-րդ դարի սկզբից նրանք քաղաքը գլխավորում էին ժառանգաբարար: 1840 թվականից ժառանգական այդ իրավունքն այլևս չկար: Քաղաքագլուխ ընտրում էին քաղաքային խորհրդի անդամները:

1860-70-ական թթ., երբ քաղաքային խորհրդը բավական ընդլայնվեց, եղել են նաև մեկ-երկու վրացիներ (քաղաքարիդի 90-97 տոկոսը հայեր էին):

- Գոյություն ունե՞՞ր ընտրական ցենա:

- Այս: Վրացի մերօրյա պատմաբնակները նշում են, որ



մինչև 1981 թվականը: Այդ ժամանակ «Սովետական Վրաստան» թերուում լույս տեսավ մի հոդված, որտեղ Վրաստանի հուշարձանների պահպանության վարչության պետ հրակի Ցիցիշվիլին, որ կարծեմ իհմա էլ պաշտոնավարում է, նշել էր այն դրական տեղաշարժի մասին, որ նախորդ տարում իրենց վարչությունը, ի թիվս հանրապետության այլ կառույցների, վերականգնել է նաև հայոց Ս. Կարապետ եկեղեցին: Այդ «Վերականգնման» ընթացքում ոչնչացվեց Թումանյանցների տոհմական տապանատունը, որտեղ ամփոփված էին երկու քաղաքագլուխ՝ Դմիտրի և Յազն Թումանյանցները:

Այսօր Թիֆլիսում ոչ մի հայ քաղաքագլուխ գերեզման չունի: Քաղաքը չունի հայ քաղաքագլուխ հիշատակներ, հակառակ որ «Կովկասի Փարիզ» ասվածը նրանց եռանդի, տաղանդի արդյունքն էր...

- Ինչո՞ւ են հռչակվել Թիֆլիսի ամենասիրելի քաղաքագլուխները:

- Ակսած 1860-ական թվականներից՝ քաղաքագլուխները:



**Արամյանցի տունը՝ մինչև 1991թ. դեկտեմբերի 22-ը**

որ գործունեությունն ավելի լայն ծավալներ է ընդգրկել: Սա Գալուստ Շերմազանյանցի հետո էր: Ուստական իշխանությունները որոշել էին շրջանառության մեջ դնել խոշոր դրամատեր հայերի կապիտալը: Ակսեցին խրախուսել բոլոր նրանց գործունեությունը, ովքեր ինչ-որ կերպ իրենց դրամագլուխները կներդնեին ինչ-ինչ շինարարությունների մեջ: Կառուցվեցին հիվանդանոց, սպանդանոց, Կուր գետի վրա՝ մի քանի կամուրջ, հասարակական այլազան շինություններ, Արտհատիկ ընկերության շենքը, գորանոցներ՝ քաղաքի արվարձանում և այլն: Եղիա Փրիդոնյանն առաջինը սալահատակեց քաղաքը: Ի դեպ, 1989թ. նրա տապանաքարի մի փշրանքը դեռևս կար Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու բակում, և վստահ չեմ նրա այսօրվա գոյության համար...

Մյուս քաղաքագլուխներից մեծ ձեռնարկումներով հայտնի էր Երեմիա Արծրունին, որ ծնունդով վանեցի էր: Նա առավել հայտնի է իր որդու՝ «Մշակ» թերթի հիմնադիր Գրիգոր Արծրունու գործունեությամբ: Նա մեծ ծավալի ձեռնարկումներ էր հղանում և տարիներ շարունակ հետևում դրանց աշխատանքներին: Օրինակ՝ 1860-ական թթ. Քարվաճառի շրջանում մի քանի հազար դեսյատին հողատարածք էր գնել, որպեսզի այնուել հայաբնակ գյուղեր հիմնադրեն:

Քաղաքի պատմության մեջ խոշոր դեր են կատարել Պողոս Իգմայիսանցը և Ալեքսանդր Մատինյանցը: Նրանց պաշտոնավարնան տարիներին (1870-1890-ական թթ.) քաղաքը, հասարակական տեսանկյունից, բավական շահել է: Քաղաք են հասցել իմելու լավագույն ջուրը: Յացի մերմուծման, հիվանդանոցների կառուցման և կենցաղային խնդիրները բավական բարելավվեցին:

- Հետաքրքիր են նաև հայ քաղաքագլուխների մշակութային նախասիրությունները: Ինչո՞ւ կ հարստացրին Թիֆլիսը:

- Գևորգ Եվանգուլյանցը նպաստել է Կանքի մայր տաճարի բակում եկեղեցական բանգարանի հիմնադրումնը. Կովկասյան բանգարանից հետո, որի հիմնադիրն է Գուստավ Ռադեն, սա երկրորդն էր՝ Թիֆլիսի հրականության մեջ:

Եվանգուլյանց բավական մոտ հարաբերություններ ուներ Գյուտ ավագ քահանա Աղանյանցի հետ, որ հեղինակել է «Դիվան հայոց պատմության» բազմահատորյակը: Նա հովանավորներ էր փնտրում Աղանյանցի աշխատությունների հրատարակության համար:

Նիկողայոս Արդությանը ժամանակի անվանի մտավորականներից էր: Նրա անձնական գրադարանը հետագայում դարձավ մեր ազգային գրադարանի հիմքը. տասը հազար կտոր և հիմնականում օտարալեզու, բացարիկ արժեքավոր գրականություն ուներ՝ կովկասագիտության վերաբերյալ: 1920թ. Յայաստանի իշխանությունները Արդությանի մահից հետո, գնեցին այդ աճրողջը և տեղափոխեցին Երևան: Ի դեպ, Արդությանը երեք անգամ ընտրվել է չորսական տարով և ամեն անգամ երկու տարի պաշտոնավարելուց հետո հրաժարական է տվել: Նրա անվան անհատական ֆոնդն այսօր էլ գոյություն ունի:

Շերմազանները «դարպասը», որ նման է դահլիճի, ամենամեծն էր: Քաղաքագլուխներ ինքը դրամատուրգ էր (մեծ



**Արամյանցի տունը՝ մինչև 1992թ. հունվարի 6-ը տեղի ունեցած հրադարձություններից հետո**

գրադարան ուներ՝ հազար կտոր հնատիպ արժեքավոր գրքեր ու ձեռագրեր): Յայ քատերական խումբը 1860-ական թթ. արդեն ներկայացումներ էր տալիս նրանց «դարպասը»: Նաև՝ վրաց քատերական խմբակը:

Եսայի Փիրոյանցի Արտիստիկ շենքի կառուցումից հետո, որ 1991թ. հրդեհի զոհ դարձավ Գամսախուրդիայի և Շևարդնաձեի հակամարտության օրերին, տասնամյակներ շարունակ ծաղկել է հայ, վրաց, ռուս քատրոնը, ներկայացվել են իտալական օպերաներ:

Թիֆլիսը ողջ արևելահայության մշակութային կենտրոնն էր:

- Իսկ ի՞նչ կատերիք քաղաքի հայկական դպրոցների մասին:

- Այդ թեման շատ տարրողունակ է և այս գրույցի շրջանակից դուրս: Թիֆլիսի հայկական դպրոցները ժամանակին ապահովում էին կրթական ամենաբարձր մակարդակը: Ակսած Ներսիսյան դպրոցից՝ Գայանյան, Մարիամյան-Շովոնյան կրթօջախները հատկապես մեծ հեղինակություն են ունեցել: Մեր բոլոր երևանցներն այդ դպրոցների շրջանավարտներ են եղել: Ի դեպ, 1992թ. մի վրացի բիզնեսմեն

հիմնահատակ քանդեց Մարիամյան - Հովհաննյան դպրոցը և տեղը մի ապարանք կառուցեց իր համար:

Թիֆլիսի համալսարանի շենքը կառուցվել է Ալեքսանդր Խատիսյանի օրոք (այն ժամանակ պոլիտեխնիկում էր կոչվում): Նրա՝ քաղաքագլուխ ընտրվելու օրերին վրացական մամուլը գրել է, որ եթե Խատիսյանին հաջողվի նույնիսկ քաղաքի փողոցները լուսավորել երկնքից իջեցրած աստղերով, իսկ փողոցները սալահատակել մարմարով, միևնույն է, իրենք դեմ են նրա ընտրությանը, որովհետև նա հայ է...

- **Ինչո՞ւ էր բացատրվում այդ անհանդուրժողականությունը:**

- Դրա արմատները խորն են: Արդեն ասացի, որ վրացիները գյուղաբնակ էին: 19-րդ դարի վերջերին վրացիների ներկայությունը կամաց-կամաց զգալի դարձավ Թիֆլիսում, բայց երեք 20-22 տոկոսից չաճեց: Նրանք նեղութ էին դրանց, մանավանդ 1870-ական թթ. վրաց ազնվականությունն աստիճանաբար կախվածության մեջ էր ընկնում իր երեկվա ճորտերից՝ հայերից: 1861թ. ճորտատիրական հրավունքի վերացումից հետո վրաց ազնվականությունը մնացել էր ճորտ մնացած վրացի գյուղացիության հոլոյսին:

Հայերը կարողացել էին փրկագին վճարել և ազատագրվել: Ազատվելուց հետո նրանք սկսեցին հարստանալ: Նույնիսկ 1880-ական թթ. արդեն վրացի ազնվականները նրանցից դրամ էին փոխ առնում... 90-ական թթ. վրաց ազնվականությունը, ամբողջ երկրով մեկ, քարշ էր գալիս դատարարաններում: Այստեղից էլ սկսվում է ծայր առնել ու ահագնանալ մի թշնամություն՝ իր հայր կեղերից է: Հայի մեղքը չեղ, որ վարկ վերցնողները վրացիներ էին և այն էլ՝ անբարեկիղը...

Հայ-վրացական անհանդուրժողականության «ամենավառ» դրսևորումը 1918թ. հայ-վրացական պատերազմն էր: Սրա հետևանքով սովետական շրջանի վրացի քաղաքագլուխները կուրորեն ոչնչացրին իրենց նախորդ հայերի գերեզմանները, նրանց ապրած տների վրա ոչ թե հուշտափականներ փակցրին, այլ քանդեցին այդ շենքերը կամ ձևափոխեցին:

- **Դուք մեկ-երկու հայ քաղաքագլուխների անուններ տվեցիք, որոնց ունեցվածքի ճակատագիրը մեզ հայտնի է: Իսկ մյուսների՞նը:**

- Որոշ քաղաքագլուխների ապրած տների մասին տեղեկություններ կան: Այդ շենքերը հետագայում ձեռքից ծեռք են անցել: Այսօր հայերին չեն պատկանում ոչ իրենց կառուցած շենքերը, ոչ էլ քաղաքի հայապատկան մյուս շինությունները: Ժամանակին ուղղակի հաճույք էր քաղաքային ավանդույթներ ունեցող և դարերի ընթացքում կառուցված Թիֆլիսի շենքերը միայն դիտելը: Սոլոլակը մեծահարուստ հայերի թաղամասն էր: Յավլաբարը, որ արհեստավորական հայ խավի բնակության վայրն էր, հատուկ, քաղաքային մթնոլորտ ուներ, որից, ցավոք, գուրկ էր մեր Երևանը: Բայց ինչպես են վարպել այդ քաղաքի հետ մերօրյա վրացի քաղաքագլուխները: Այս մասին չի կարելի լրել, այս հանգամանքը չի կարելի շրջանցել...

1991-92թթ. ձմռանը, երբ Թիֆլիսում հակամարտության մեջ էին պետությունն ու ընդդիմությունը, տանկերով համագարկներ էին տալիս քաղաքի կենտրոնում՝ Ռուսավաճառքություն՝ նախկին «Գոլովինսկի պրոսպեկտում»: Միքայել Արամյանցի հինգ հարկանի տունը, որտեղ հետագայում «Մաթեստիկ», իսկ խորհրդային տարիներին «Թթիլիսի» հյուրանոցն էր, իր ճարակ դարձավ: Նրա կողքի երկհարկանի շենքը՝ Աբրյանցի տունը, որտեղ Վրաստանի հուշարձանների պահպանության վարչության արխիվն էր, ամբողջովին այրվեց: Արտիստիկ ակումբի շենքը, որ Թիֆ-

լիսի դրամատիկական թատրոնն էր, նույնպես իր ճարակ դարձավ: Քաղաքի կենտրոնը նոխրացրին: Մեկը որ չի քրունել, չի ստեղծել, քարզ քարին չի դրել, չի էլ կարող պահպանել: Իսկ մեզ՝ հայերին համար սա պեսք է ուղղակի դաս լինի: Այդ նյութերը հավաքելիս ես հասկացել էի, թե ապագա գիրքն ինչ առաքելություն պիտի ունենա: Կանխագում էի, որ դա դասագրքի արժեք պիտի ունենա համայն հայության համար:

- **Մեր այսօրվա քաղաքագլուխներին ի՞նչ ունեն սովորելու թիֆլիսարնակ իրենց նախորդների պատմությունից:**

- Ոչ միայն Երևանի քաղաքագլուխները, արհասարակ, ամեն մի հայ սովորելու շատ բան ունի: Գլենիելյում (ԱՄՆ) իրար հաջորդած մի քանի քաղաքագլուխն ունենք: «Ասպարեզ» թերը հրճվանքով գրել է: «Վերընտրվեց հայ քաղաքագլուխն»: Մենքը: «Պարզապես՝ մենքը: **Այն, ինչ չես կառուցել քո հայրենիքում, նշանակում է՝ կառուցել ես ավագի վրա:** Սա ծշմարտություն է բոլոր ժամանակների համար, բոլոր սերունդների համար, մի բան, որից, ցավոք, հարկ եղած դասը չենք առնում: Այս գիրքը դասագիրք են համարում այն ինսաստով, որ մեզ հուշում է, որ այլևս չափետք է քրտնենք օտարի հողում և, հակառակը, որտեղ պետք է կերտենք, որ պեսզի լինենք դրա վայելողն ու պահապանը: **Այն, ինչ չենք կառուցել Յայաստանում, այսօր դրա տերը չենք: Կովկասի Փարիզ կոչված Թիֆլիսը դրա լավագույն օրինակն է: Թիֆլիսի հայկական համայնքն այսօր հավաքվում է... բացօքյա սրահ չունեն, հավաքատեղի չունեն: Ամառ-ձմեռ հավաքվում է հայոց գործող եկեղեցու բակում: Քաղաք ենք կառուցել, մեկ սենյակ չենք ստացել: Եթե սա այլևս դաս չլինի մեզ համար, մենք կշարունակենք կորցնել մեր աշխատանքի պտուղները...»**

- **Վրացիները հավանաբար գիտեն այս աշխատության մասին: Ի՞նչ արձագանքներ եք ստացել:**

- Գիրքը իրատարակվել է 2003թ. մայիսին՝ հայերեն և ռուսերեն: Նույն անսին աննշապես ռուսերեն մի օրինակ նվիրել եմ ՀՀ-ում Վրաստանի դեսպանատանը: Տասնյակ օրինակներ են ուղարկվել Թիֆլիսի: Նկատի ունենալով թիֆլիսահայերի մեծ մասի ռուսախսոսության հանգամանքը՝ գիրքը հրատարակել ենք նաև ռուսերեն: Առ այսօր որևէ արձագանք չկա: Չեմ ուզում մեկնաբանել այս լրությունը, բայց, հավանաբար, իրճվանքով չեմ ընդունել: Գիրքի աղիթով լրում են, որովհետև ասելիք չունեն, երես չունեն: Շուրջ հազար աղբյուր է շրջանառության մեջ դրվել: Ամեն ինչ փաստացի է: Փաստերի դեմ վրացին ստիպված է լրել գոնե այս պարագայում... Ամբողջ հարցն այն է, որ մենք հավակնություններ չունենք՝ Պատմական Յայաստանում չեն: Քանի անգամ Թիֆլիսում ինձ մոտեցել է վրացի ոստիկան և գգուշացրել, որ իրավունք չունեմ լրացնելու: Նախ հարցրել են ազգությունը և միանգամից սկսել հոխորտալ հայերդ իրավունք չունեք նկարելու:

- **«Գող սիրտը դո՞ղ»...**

- Ես հենց այդ տպավորությունն եմ ստացել: Ինչո՞ւ իրավունք չունենք: Պատմությունը մնում է պատմություն: Ոչինչ հնարավոր չէ կոծկել քանդելով, քերելով, կեղծելով... Մի անգամ մի ոստիկան շատ պարզ ասաց. «**Թիֆլիսում իրավունք ունեն նկարել միայն նրանք, ովքեր ոչինչ չեն կառուցել:**» Յայերը և գերմանացիներն իրավունք չունեն նկարել: Վրացիները վայելում են մեր կառուցածը, բայց արգելում են նկարել... **Ինչքա՞ն կարող ենք ծաղկեցնել օտարի հողը: Ախալ ենք ապրել:** Օտարի հողը ծաղկեցնող հայը ոչ իր ստեղծածի վայելողն է լինելու, ոչ էլ նրա հիշատակն է մնալու, ինչպես որ չեն պահպանվել Թիֆլիսի հայ քաղաքագլուխների հիշատակները...

**Դասմիկ Գուլակյան**



# «ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ»

Ույն թվականի օգոստոսի 14-23-ը Երևանում տեղի ունեցավ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական առաջին փառատոնը, որին մասնակցեց ավելի քան 1500 հայ արվեստագետ՝ Հայաստանի Հանրապետությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Մեծ Բրիտանիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Սիրիայից, Լիբանանից, Իրանի Խոլամական Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից և Ղազախստանից: Մասնակիցները հանդես եկան Երևանում, հանրապետության մարզերում, ինչպես նաև՝ ԼՂՀ-ում:

Միջոցառման շրջանակում անցկացվեցին նաև լավագույն երգի՝ «Սայաթ-Նովա» համահայկական մրցանակաբաշխությունը և «Նորան հատիկ» մանկապատանեկան բատերական փառատոնը:

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը կազմակերպել էր ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Վերջինիս աջակցել են ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, Հայաստանի նկարիչների մի-

ությունը, Հայաստանի ճարտարապետների միությունը, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միությունը, Հայաստանի գրողների միությունը, Հայաստանի թատերական գործիչների միությունը, Հայաստանի պարարվեստի գործիչների միությունը, Հայաստանի ազգային պարարվեստի միությունը, Հայաստանի երաժշտական ընկերությունը, Հայաստանի կինեմատոգրաֆիայի միությունը, Հայաստանի կինոգետների և կինոլրագրողների ասոցիացիան, Հրատարակիչների ազգային ասոցիացիան, Հրատարակչական գործի գործակալությունը, Համագգային մշակութային միությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Հազարավոր մարդկանց մեջ իրենց հայկական տարագով առանձնանում էին փառատոնի խորհրդանիշները՝ Նարեն ու Նարեկը: Նրանք, շրջելով բազմության մեջ, ներկայացնում էին փառատոնի նպատակն ու մասնակիցներին:

\*\*\*

# ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ՓԱՌԱՏՈՒԻ ՄԱՍԻՆ

«Մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ հայ ժողովուրդ. կարևորը սրա գիտակցումն է»:

**Հրաչյա Աշուլյան,** փառատոնի բացման և փակման արարողությունների գլխավոր ռեժիսոր

«Սայր Աթոռ Սուլր Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում ենք «Մեկ ազգ, մեկ մշակույթ» նշանաբանով Համահայկական մշակութային փառատոնի անցկացումը մեր ազգությունում՝ Հայաստանում և Արցախում: Մենք միշիթարված ենք հոգով և երջանիկ ենք, տեսնելով, թե ինչպիսի նախանձախնդրությամբ ու խանդավառությամբ վերջին մի քանի տարիներին Սայր Հայրենիքում կազմակերպվում են համահայկական բովանդակությամբ տարբեր միջոցառումներ ու հավաքներ, որոնք առավել զորացնում են մեր մեջ մեկ ազգ լինելու գիտակցությունն ու զգացումը, ամրապնդում կապերը Հայրենիքի և Սփյուռքի միջև:»

Փառատոնը կոչված է հայ հոգու կենդանության դրսւորումը լինելու, մեր պատմությունը հիշող, մեր ավանդներին ու մշակույթին հարազատ մեր ներկայով ու միացյալ լուսավոր գալիքով ապրող հավատավոր հոգու դրսւորումը: Եվ սա է այն անփոխարինելի կարևորությունը, որ պիտի ունենա փառատոնը՝ իրեն համազգային և մեկ միջոցառում, իրեն համազգային տոնախնդրություն: Մենք հավատում ենք, որ փառատոնը իր նպաստը պիտի մեր մշակութային կյանքի զորացնանը և պիտի բացահայտի նաև մեր ժողովրդի, շնորհալի ու տաղանդավոր շատ զավակների:

Թող Տերն իր խաղաղության և օրինության ներքո բարոր ու բարգավաճող պահպանի մեր Հայրենիքը, ի սիյուս աշխարհի՝ մեր ժողովորդին և զարթյալ ու զորացյալ նրա՝ հավատով կենդանի մշակութասեր ոգին:

Շնորհը, սէր և խաղաղութիւն Աստուծոյ Եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան»:

**Ա. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ.**

«Իմ դարավոր երազանքն է եղել, որ մեր ժողովուրդը դաշնա մեկ ազգ, ունենա մեկ մշակույթ: Ամբողջ կյանքում շրջելով աշխարհով մեկ՝ հասկացել են, որ մեր ժողովրդի միակ փրկությունը միասնականության մեջ է»:

**Վլարիմիր Աբաջյան,** ասմունքող

«Բոլորիս նպատակն էլ մեկ է՝ հայ մշակույթով միավորվել և դաշնալ մեկ ազգ»:

**Վրեժ Քասունի,** սիրիակա նկարիչ

««Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի արահետը ծգվում է Մասյաց աջ ու ահյակ կողմերից, հասնում մինչև Եփրատի ու Տիգրիսի ափամերձ տարածքներն ու օվկիանոս կտրելով, Սայր Հայրենիք բերում տարագիր կռունկի արծաթե թևաբախումը»:

Փառատոնը մի գեղեցիկ կամարի տակ է հավաքում հայ խմբերգն ու ասմունքը, հայ թատրոնն ու պարը, հայ



երգն ու պատկերահանդեսը, որ ձեռակերտվում են աշխարհի տարբեր երկրներում, բայց հավերժորեն մնում մաշտոցաշունչ ու հայկարարքա: Երևան ու Հայրենիքը բացել են իրենց սրտի ու կարոտի դրները՝ աշխարհի բոլոր հայերի, մշակույթի բոլոր նվիրյալների առջև:

Բարի գալուստ...»:

**Հովհակ Հովեյան,**  
ՀՀ մշակույթի հարցերի նախարար

««Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը ոչ միայն միտված է դառնալու համազգային տոն, այլև մի միջոցառում, որը կոչված է փաստելու, թե որքան բազմազան են հայության տարբեր հատվածներն իրենց մշակութային դիմագծով և, միաժամանակ, որքան նման: Մեր պատմության ու անցյալի բերումով լինելով աշխարհասփյուռ ազգ՝ մեր թերևս հենց այս առանձնահատկությամբ է, որ մնում ենք կենաւնակ, ստեղծագործական ներուժով՝ անսպառ: Այս փառատոնը մի հրաշալի հնարավորություն է ոչ միայն համախնբվելու հայրենի հարկի տակ, այլև ինքներս մեզ առավելագույնս ու ամեն անգամ նորովի բացահայտելու, միմյանց ավելի խորը ճանաչելու և միմյանցից ճանաչվելու: Շարունակական այս գործընթացը էլ հենց կայանում ու ամրապնդվում է մեր ազգային միասնականությունը, անթերի երևում են մեր ազգային դիմագիծն ու մեր ինքնությունը»:

**Նաիրա Մելքոնյան,** «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

«Այսօր, երբ գլոբալացման արդի ժամանակաշրջանը բնութագրվում է զանգվածային կերծ մշակույթի կողմից ավանդական մշակույթների դրւում մղմանք, էլ ավելի է արժենորվում մշակութային ննան միջոցառումների կարևորությունը: Ինչպես ցանկացած փոքրաթիվ ժողովրդի, այնպես էլ հայերին առջև կանգնած է մշակութային ինքնության պահպանան, զարգացման և աշխարհին մեր հազարամյա մշակույթը ներկայացնելու խնդիրը: Հաշվի առնելով նշված փառատոնի առանձնակի կարևորությունը և նշանակությունը Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում, հույսով են, որ փառատոնը ոչ միայն հրաշալի հնարավորություն կիանոիսանա ներկայացնելու աշխարհի բազմաթիվ երկրներում սփռված մեր ժողովրդի տարբեր հատվածների մշակութային արժեների համայնապատկերը, այլև ակնկալում են, որ այն կիանա ավանդական, և կնպաստի ազգային միասնական մշակութային միջավայրի ձևավորմանը: Ժամանակն է, որ համաշխարհային քաղաքակրթության մեջ մշակութային մեջ ներդրում ունեցող ժողովուրդը զգա իր ուժը, վերահիմնաստավորի արժանապատվության իր զգացումը և երկրպագի իր ազգային մշակույթը, որպես զարգացման և առաջընթացի վատահելի երաշխիք»:

**Թամարա Պողոսյան,** «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն

# Ազգային ՊԱՐԱՐՎԵՍԻ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Մոդել պարումներ



«Կարին» ազգագրական երգի-պարի խումբ  
Զախից առաջինը՝ Գագիկ Գինոսյան

«Պարն արտահայտում է յուրաքանչյուր մի ազգի բնորոշ գծերը,  
մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:

## Կոմիտաս

Ժ ողովուրդների կյանքում միշտ մեծ նշանակություն է ունեցել պարարվեստը և, չնայած արվեստներից ամենակոնսերվատիվն (ամենապահպանողական - խմբը) է, միշտ զարգացել է տվյալ ժողովրդի քաղաքակրթությանը և կենսակերպին զուգա-

**Նոյնիսկ հայոց պետականության բացակայության շրջանում հային հայ պահող հիմնական կրվաններից մեկը ազգային արվեստն է եղել, իսկ այս ոլորտում թերևս կարևորագույն դեր է ունեցել պարարվեստը:**

Իե՞՞՛: Բայց այդ փոփոխություններով հանդերձ՝ մեր պատերը կրում են հազարամյակներ առաջ ստեղծված տուտեմական, եպիկական, վիպական, ծիսական և այլ պարերի կնիքը, իսկ հոգեբանությունը գրեթե ոչ մի փոփոխություն չի կրել: Այդպես եղել է բազում դարերի ընթացքում: Նոյնիսկ հայոց պետականության բացակայության շրջանում հային հայ պահող հիմնական կրվաններից մեկը ազգային արվեստն է եղել, իսկ այս ոլորտում թերևս կարևորագույն դեր է ունեցել պարարվեստը: Նշանակում է՝ ազգային դաստիարակության և ազգային դիմագծի պահպանման գործում անշափ կարևոր է ազգային պարարվեստի անաղարտության պահպանումը և, ազգային նկարագրին ու հոգեբանությանը հարազատ մնալով, նրա զարգացումը:

Ազգային պարն այժմ բաժանվում է երկու խմբի՝ ազգագրական և ժողովրդական: Ժողովրդականը ազգագրականից պետք է տարբերվեր միայն բեմադրությամբ,

այսինքն՝ ազգագրական պարին պետք է բեմական տեսք և բեմական կեցվածք տրվեր:

Անցյալ դարի 50-ական թվականների վերջից ազգային պարը ծևախեղվեց՝ այսպես կոչված խորհրդային «խորեոգրաֆիկ» դպրոցի կաղապարը Խցկելու համար: Եվ քանի որ հանրապետության բոլոր առաջավոր պարի խմբերը և պարարվեստի ուսումնարանը բացառապես ղեկավարեցին դասական, բալետային պարի ներկայացուցիչները, ազգային պարն օրեցօր հեռացավ իր ակունքներից և այժմ սկզբունքորեն հակասում է հայ պարի հիմունքներին, որոնք նշված են Կոմիտասի, Վահրամ Արիստակեսյանի և Սրբուհի Լիսիցյանի աշխատություններում: Դայկական պարի հիմքը զիստային շարժումներն են, այսինքն՝ ոտքերի զսպանակավոր շարժումները, որոնք հնարավոր են միայն ծնկածալերի միջոցով: Դասական պարերի համար ոտքերի այդ վիճակը անհարի է, որովհետև «ծնկմերը դրւու են գալիս», և դասական պարը, ավելի ճիշտ կլիներ ասել՝ պարողը

**Դայկական պարի հիմքը զիստային շարժումներն են, այսինքն՝ ոտքերի զըսպանակավոր շարժումները, որոնք հնարավոր են միայն ծնկածալերի միջոցով:**

Կորոնում է իր սլացիկությունը: Առանց վարանելու կարելի է ասել, որ ազգային և դասական պարարվեստների հիմունքները, մեղմ ասած, այնքան էլ համատեղելի չեն, և ոչ մի դեպքում չի կարելի ազգային պարի դասավանդում սկսել դասական պարագայերի ուսուցմանը: Վերջինս հիմնավորապես յուրացնելուց հետո գրեթե անհնարի է դառնում ճիշտ «հայերեն պարելը»:

Ցավոք, և պարարվեստի ուսումնարանում, և ժողովրդական կոչված պարախմբերում դասավանդումը հենց այդ ձևով էլ կատարվում է՝ օրեցօր հեռացնելով ազգային պարն իր ակունքներից, իսկ շատ հարցերում սկզբունքորեն հակասելով ազգայինին: Անաղարտ ազգային պարն այսօր պահպանվել է Հայրիկ Մուրադյանի և մի քանի այլ նվիրյալների հիմնադրած սիրողական ազգագրական խմբերում:

Առանձին քննարկման խնդիր է ազգային տարագի վիճակը: Այստեղ նույնպես ավելի շատ օտարամուտ տարրեր կան («տրիկո», «չուվակի» և այլն), քան բուն ազգային: Հաճախ ազգայինի տարրեր կրող տարագ-

**Ազգային պարը վերածվել է ֆիզիկական աշխատանքի՝ բացառելով հոգևոր որևէ ընկալում կամ ապրում, և դա այն դեպքում, եթե պարը միակ արվեստն է, որը համակցում է հոգին ու մարմինը և, ըստ Կոմիտասի, միակ արվեստն է, որը փոխկապակցված է ենթագիտակցության հետ:**

Եթեն էլ այնքան անճաշակ և գունային այնպիսի համադրումով են ներկայացվում, որ հարիր չեն նույնիսկ մեր ամենագեղջկական տարագին, էլ չեն ասում, որ գործեք ոչ մի խնդրում ներկայացված չեն մեր քաղաքային և, առավել ևս, մեր հին իշխանական տարագները: Թողնենք այս խնդիրները տարագագետներին և կրկին անդրադառնաք ազգային պարարվեստի խնդիրներին:

Ժողովրդական կոչված պարի թերևս ոչ մի կարկառուն ներկայացուցիչ չգիտել և, բնական է, որ չի էլ կարող ուսուցանել ազգային պարերից և ոչ մեկի ծագումնարանությունը, անվանման մեկնարանությունը և այլն: Ուրեմն խոսք անգամ չի կարող լինել պարերի հոգևոր ընկալունակության մասին: Ազգային պարը վերածվել է ֆիզիկական աշխատանքի՝ բացառելով հոգևոր որևէ ընկալում կամ ապրում, և դա այն դեպքում, եթե պարը միակ արվեստն է, որը համակցում է հոգին ու մարմինը և, ըստ Կոմիտասի, միակ արվեստն է, որը փոխկապակցված է ենթագիտակցության հետ:

Ընդհանրապես չի ուսուցանվում նաև Լիսիցյանի կինետոգրաֆիայի (պարային գրառումներ) համակարգը, որի շիմացությունը բացառում է պարագետների հետագա բանահավաքչական աշխատանքները: Մենք արհետականորեն օտարացրել ենք ազգային պարը ժողովրդից: Իսկ պարի բնականոն ընթացքը, առավել ևս զարգացումը կարելի է ենթադրել միայն այն ժողովրդին վերադարձնելու ժանապարհով:

Այս ամենի մտահոգությամբ ես հանդիպել, գրուցել եմ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախկին նախարարություն հետ: Նրա «արձագանքը» շատ ավելի մտահոգիչ էր, քան բուն խնդիրը: Անենահանձարեղ միտքը, որ նա կարողացավ «երկնել», այն էր, որ «Ազգային պարարվեստի բարեփոխումները լուրջ քաղաքական լուծումներ են պահանջում», իսկ բարեփոխման համար իմ ներկայացրած առաջարկություններին պատասխանեց: «Ընդունելի առաջարկներ են, դուք ֆի-

նանսները հայթայթեք, մենք ձեր առաջարկությունները կանենք»:

(Ամենահանձարեղ տնտեսագետն անգամ անկարող է հաշվարկել, թե մեր երկրի «դե ֆակտո» տերերի և բազկարուներին «սոսնձված» պաշտոնյաների շքեղ առանձնատների, շքեղաշուր փոխադրամիջոցների «հիմքում» ինչքան Ազգային արվեստ է թաղված, և քանի դար հետո հնագետներին կիաջողվի նրանց փլատակներում պեղել բուն Ազգային արվեստը:)

Մոտավորապես նույն «հանձարեղության» պատասխան տվեց պարարվեստի ուսումնարանի նորանշանակ տնօրեն պարոն Նորիկ Մեհրաբյանը. «Ես օպերայի և բալետի թատրոնի համար «պրոֆեսիոնալ» պարող-պարուիներ եմ պատրաստում: Ազգային պարն իմ խնդիրը չէ, ով ուզում է թող գրադպիհ»: Մինչդեռ պարարվեստի ուսումնարանի բուն առաքելությունը հայկական պարն իր ազգային ակունքներից ոչ թե կտրելու է, այլ ուսումնական ընթացքն ազգային պարի սկզբունքներին հարազատացնելը և վերստին ազգային պարի հիմքերին վերադարձնելը: Ի դեպ, վերջերս «Ավանգարդ» շաբար-

**Մենք մեղանչել ենք հայ պարի դեմ: Կտրել ենք արմատները, փորձում ենք մի կերպ կանգուն պահել երերացող ծառը և դեռ ուզում ենք, որ պտուղ տա: Այսօրվա հրամայականն է վերադառնալ արմատներին և, կրկնում եմ, ազգային պարը վերադարձնել ժողովրդին, վերստին դարձնել ժողովրդական:**

Եթերին տրված հարցագրույցից ինացանք, որ նորանշանակ տնօրենը ծրագրել է ստեղծել մոդեռն բալետի բաժին: Եթե միայն իմանար երջանկահիշատակ Վահրամ Արիստակեսյանը, թե իր իսկ հիմնադրամ ազգային պարարվեստի ուսումնարան ինչ առաքելության է ծառայում...

Այսամից հետո ինչպես չմորմոքար Կոմիտասը.

**«Ղե Եկ, վարդապետ, ու մի՛ խենթանա»:**

Մենք մեղանչել ենք հայ պարի դեմ: Կտրել ենք արմատները, փորձում ենք մի կերպ կանգուն պահել երերացող ծառը և դեռ ուզում ենք, որ պտուղ տա: Այսօրվա հրամայականն է վերադառնալ արմատներին և, կրկնում եմ, ազգային պարը վերադարձնել ժողովրդին, վերստին դարձնել ժողովրդական:

Իսկ թե ինչպիսին է մշակույթի նոր նախարարի դիրքորոշումն ու վերաբերմունքն ազգային պարի հարցում, գոնե ինձ հայտնի կդառնա նրա հետ հանդիպման ընթացքում:

Ես վախենում եմ, շատ եմ վախենում, որ վաղը հայ պարը գրաբար դառնա...

**Գագիկ Գինոսյան  
«Կարիմ» ազգագրական երգի-պարի խմբի ղեկավար**

**Խմբ. - Գագիկ Գինոսյանի հետ մեր զրոյցը կարող եք կարդալ «Շրջադարձի» հաջորդ համարում:**



# Հայրենի արևելագիտության լավագույն բարեկամը

Բոլորին ծանոթ է այս ծանր վիճակը, որի մեջ հայտնվեց հայրենական գիտությունը՝ ԽՄՀՍ փլուզումից հետո: Ինչպես և ամբողջ Երկիրը՝ գիտությունը պարզապես գոյատևման խնդիր էր լուծում:

Նման իրավիճակում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտին (ԱԻ) իր բարերար ձեռքը մեկնեց ԱՄՆ-ի «Արմեն և Բերսարե Զերեջյան» հիմնադրամը:

Անեն ինչ սկսվեց 1996 -1997 թվականներին, երբ պատմագիտության դոկտոր, պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը ՍՊՀԿ հերթական համագումարի սիյուռքահայ մասնակիցներին հրավիրեց իր մոտ: Այցելուների թվում էր նաև մի եզակի համեստ, լուրջ, գիտության և քաղաքականության նկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերող հայորդի՝ Արսեն Զերեջյանը: Սկզբունքահայեց ծանոթացան ինստիտուտի աշխատանքներին և դիմագրաված բազմապիսի խնդիրներին: Ծանոթացան և... վերջ:

1996թ. դեկտեմբերին մի օր պրոֆ. Հովհաննիսյանի գրասենյակում հնչեց հեռախոսազնոցը: Յայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) երևանյան գրասենյակից էր: Հայտնում էին, որ պրոֆ. Հովհաննիսյանին գումար են ուղարկել ԱՄՆ-ից և հրավիրում էին ստանալու այն: Փո՞ղ: Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Տնօրենը խնդրեց ճշտել՝ արդյո՞ք չեն սխալվել հասցեատիրոջ հարցում: Պարզվեց՝ ո՛չ. գումարն ուղարկել էր պրոֆեսորի՝ անունով: Նվիրատուն Արսեն Զերեջյանն էր, որն շտապել էր օգնության ձեռք մեկնել ԱԻ-ին:

Չատ շուտով կողմները փոխայմանավորվեցին. Արսեն Զերեջյանի հիմնած և տնօրինած «Արմեն և Բերսարե Զերեջյան» հիմնադրամն օժանդակելու էր ինստիտուտին՝ հիմնականում ապահովելով երկու ծրագրերի ֆինանսավորում. ա) արևելագիտների աշխատությունների հրատարակումը: Ինստիտուտի գիտական խորհրդը կազմելու էր հրատարակելի աշխատությունների ցուցակը, իսկ ընտրությունը կատարելու էր բարերարը: բ) Երիտասարդ արևելագիտների խրախուսման նպատակով Վերականգնել ամենայա գիտական համաժողովների ավանդությը, ֆինանսավորել դրանք (տեղեկաթերթիկների, գեկուցումների հիմնադրույթների ու գեկու-

ցումների ժողովածուների հրատարակում, մտերմիկ, խորհրդակցական հանդիպումների կազմակերպում և այլն):

Արսեն Զերեջյանն արտակարգ ճշտապահությամբ կատարեց իր խոստումները: Հայրենական կողմը՝ ևս: Հաստատվեցին ամուր, վստահելի կապեր, որոնք ոչ միայն շարունակվում են առ այսօր, այլև արգասաբեր են:

Երկու ծրագրային ուղղություններով իրագործումները բավական ծանրակշիռ են: Այսպես՝ մինչ օրս, հիմնադրամի միջոցներով հրատարակվել է 43 անուն գիրք: Տարիներ են եղել, երբ հիմնադրամի օժանդակությամբ լույս տեսած հրատարակությունների քանակով ակադեմիայի համակարգի ինստիտուտների շարքում ԱԻ-ն գրավել է առաջին տեղը: Ուշագրավ են նաև այդ հրատարակությունների գիտական որակն ու հեղինակների տարիքային հատկանիշները: Լույս են տեսել թե՝ երեց, թե՝ միջին և թե՝ մանավանդ, կրտսեր սերմոդի արևելագետների գիտական, հաճախ՝ բարձրարժեք աշխատությունները: 1997 թվականից մինչ օրս մայիս-հունիս ամիսներին պարբերաբար տեղի են ունենում երիտասարդ արևելագիտների ամենայա գիտաժողովները, լույս են տեսնում դրանց ծրագրերի տեղեկաբերթիկները, ներկայացված գեկուցումների հիմնադրույթների անփոփագիր-գրքույկները և, ի վերջո, գեկուցումների ժողովածուները:

Արսեն Զերեջյանը մահացավ 2003թ. վերջին: Բարեբախտաբար, նրա ժառանգորդն ու որդին՝ Եղուարդը, շարունակում է հայրենի արևելագիտությանն օժանդակելու հոր Նվիրական և շնորհակալ գործը:

Արսեն Զերեջյանի լույս հիշատակին էին նվիրված այս տարի լույս տեսած «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի 22-րդ հատորի լույս ընծայումն ու հունիսի 3-4-ը տեղի ունեցած Երիտասարդ արևելագիտների 25-րդ գիտաժողովը:

Մեր գորուցի ընթացքում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն և Հովհաննիսյանը Վստահություն հայտնեց, որ արդյունավետ և փոխհարստացնող համագործակցությունը կշարունակվի և էլ ավելի կամրապնդվի «Արմեն և Բերսարե Զերեջյան» հիմնադրամի հետ, որի տրամադրած գումարները կարելի է համարել «մեծ ներդրում հայ արևելագիտությունը համաշխարհյան մակարդակի վրա պահպանելու գործուն»:

Արսեն Զերեջյանի հիմնած «Արմեն և Բերսարե Զերեջյան» հիմնադրամ - ՀՀ ԳԱԱ ԱԻ համագործակցությունն օրինակելի նախաձեռնություն է այն բոլոր հայորդների համար, ովքեր հավատում են հայության տարբեր հատվածների գիտական, ֆինանսական և այլ ներուժի միավորմաբ արարվող հրաշըներին:

Գևորգ Յազդյան

# ԳՈՎԵԼԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեծի Տաճար Կիլիկիո Կրամ Ա Կաթողիկոսը 2004 թուականը յայտարարեց «Հայ ընտանիքի տարի»: Այսուհանդերձ, շատ քիչ միջոցառումներ կատարուեցան տարրուան առաջին կեսին՝ այս յայտարարութիւնը կենսագործող: Այդ քիչերուն մէջ կ'առանձնանայ «Համազգային» Կրթական եւ Մշակութային Միութեան «Ուուրէն Զարդարեան» մասնաճիւղի (Պեյռութիւն Եշրէֆի շրջան) նախաձեռնած «Յոյսի Դուռը. Նուիրուած Ընտանիքին» խորագրուած խոտասալիկը (CD):

Ի դեպ, այս խոտասալիկը յիշեալ մասնաճիւղի մշակութային նաման երկրորդ իրագործումն է: Երկու տարի առաջ, ան իրապարակ հանած էր հայ գուսանական երգերու խոտասալիկ մը՝ կատարողութեամբ լիբանահայ շնորհալի երգիչներու և երգչուիհներու՝ նապատակ ունենալով՝ ա) հայութեան մէջ վար պահել հայ երգարուեստի գուլալ ակունքներու փնտօսութքը, բ) հակադարձել հայկական միջավայրին մէջ օրէ օր տարածուող օտար երգին ու երաժշտութեան (մասնաւորաբար՝ թրքականին):

Հայ ընտանիքին նուիրուած խոտասալիկը բաղկացած է 14 երգերէ, որոնք կը գովերգեն հայ նայրը, հայ հայրը եւ, առհասարակ, հայ ընտանիքն ու հայկական ընտանեկան ազգային աւանդոյթները: «Սայրս», «Հայոց կանայք», «Բարի հայրիկ», «Մայր», «Անգին մայրեր», «Ո՞վ է ասում», «Քե՛զ, իմ փոքրիկ», «Մօր սրբ», «Մարտիկի երգը», «Անգին եղբայր», «Իմ անոյշ մայրիկ», «Հայրս», «Մայրիկիս» երգերը կը կատարեն լիբանանահայ վեց երգիչ-երգչուիհներ, ովքեր ծանոր են հայ երաժշտութեան անաղարտութեան նկատմամբ իրենց նախանձախնդրութեամբ՝ Մանուկ Մինասեան, Շաքէ Պաղտասարեան, Սալբի Քէշէնան, Հրաչ Կայծակեան, Էլի Պերպէրեան եւ Գարնիկ Սարգսեան: Երգերու մէկ մասի դաշնաւորողն է Սեղո Պաղտասարեանը, որու ծայնային սրբաւորույթին մէջ ալ կատարուած է արձանագրութիւնը:



Խոտասալիկը պարունակող գրքոյկին մէջ տեղ գտած են երգերուն բառերը, հեղինակներուն, երգահաններուն եւ մեկնաբանողներուն անունները, աւարտին՝ այն հովանաւոր-նուիրատուներուն անունները, «որոնք ի յարգան կամ ի յիշատակ իրենց ծնողին ու ընտանիքին համեստօրէն յաւերժացնող արարքով, իրականացնուցին այս խոտասալիկին հրատարակումը»:

Հայ երգի ու երաժշտութեան ժողովրդային նահանջի մեր օրերուն, «Համազգայինի» «Ուուրէն Զարդարեան» մասնաճիւղի այս նախաձեռնութիւնը արժանի է ամէն գովասանքի: Կը մնայ յուսալ, որ մասնաճիւղի այս երկու խոտասալիկներուն կը հետեւին նորերը՝ ի փառ եւ ի յարգանք հայ ազգային արժեքներուն:

Տեղեկութիւններու համար կարելի է դիմել [www.roupenzartarian.com](http://www.roupenzartarian.com) կայքէջին:

Գեւորգ Եազըճեան

## «ՀԱՅԵՐԵԼ - ՖՐԱՆՍԵՐԵԼ», «ՖՐԱՆՍԵՐԵԼ - ՀԱՅԵՐԵԼ» ԲԱՆԱՐԱՆՆԵՐ

Թագվոր Թագվորյան, «Հայերեն-ֆրանսերեն» բառարան (60 հազար բառ): Փարիզ, 980 էջ, չափսը՝ 25սմ x 16սմ, գինը՝ 48,8 եվրո:

Թագվոր Թագվորյան, «Ֆրանսերեն-հայերեն» բառարան (50 հազար բառ): Փարիզ, 910 էջ, չափսը՝ 25սմ x 16սմ, գինը՝ 45,8 եվրո:


Գոքերը կարելի է ձեռք բերել հեղինակից:

Հասցե՝ Takvor Takvorian, 52,

Avenue Jean-Jaures 05000 Gap,

France.

Հեռախոս՝ 04 92 51 07 56:



# Բագրափի այրին

## (ակնարկ)

Երկար ժամանակ գրիչս դիմադրում էր, չէր ուզում գրել այս անսովոր, ողբերգաշունչ տողը: Գրիչս չէր ուզում, սիրուս էլ չէր ուզում, բայց, այնուամենայնիվ, սիրուս ցավեցնելով գրեցի այն, և ծանոթ սարսուջ պատեց ինձ... Մի՞թե իրոք սիրելի ընկերս՝ տաղանդավոր գրողն ու պատմաբանը, ամենքի համար թանկափն Բագրատ Ուլուբարյանը չկա, նրա տիկինը՝ աշխարհում նրա ամենամեծ նվիրյալը՝ տիկին Արուսը, այրու սկերի մեջ է, սգի մեջ: Ինձ համար դժվար է մտածել, հաշվել, որ դաժան իրողությունը իրոք իրողություն է: Դարավոր չէ, որովհետև եղվարդի նրա այգու մեջ նրանց միշտ միասին են տեսել: Տեսել են, թե Բագրատը՝ արցախյան շարժման այդ հերոս դեկավարն ու կազմակերպիչը, ինչպես եղվարդյան մի հողակտոր դարձել էր արցախյան. տուն կառուցել, ծառեր տնկել, ստեղծել այնախի այգի, ինչպիսին կար այնտեղ՝ Արցախում, հայրենի Մուշկապատ գյուղի հայրենի տան առաջ, ուր ամեն ծառի տակ նրա հողագործ հայրը՝ Արշակ քերին, գինու կարաս էր դրել, որ բաց անի, երբ Բագրատն իր ընկերներով, հյուրերով երևա: Տեսել են, թե ինչպիսի խնամքով էր Արցախից բերած ծառերը տնկում, ինչպես էր գուրգուրուն նրանց, իսկ նրա կողքին միշտ կանգնած էր լինում տիկին Արուսը՝ միշտ պատրաստ կատարելու նրա խնդրանքը, օգնելու նրան, որ եղվարդյան այս տունն ու այգին դաշնան իրոք արցախյան այգի ու տուն: Այդպիսին էր Բագրատ Ուլուբարյանը: Որտեղ լիներ, ինչ հողի վրա էլ կանգներ, հողը դարձնում էր արցախյան: Այդպիսիք էին նրա ծնողները, այդպիսին է նաև այսօր նրա այրին՝ տիկին Արուսը:


Բագրատ Ուլուբարյանի և նրա գերդաստանի հետ ին բարեկանությունը 57 տարվա պատմություն ունի: Հիշում են, երբ 1957 թվականին սիրիոյան հատուկ ճանքարներից վերադարձել էի հայրենի Ստեփանակերտ, շատերը՝ նոյնիսկ ին իին ընկերները, դեռ չեն ուզում մտտենալ ինձ՝ նախկին քաղբանտարկյալիս: Բայց Բագրատն իսկովն ընկերացագ ինձ հետ, սկսեց հաճախ հանդիպել, խրախուսել, նաև հրավիրել տուն: Նա նոր էր հիմնավոր-

վել Ստեփանակերտում, բնակվում էր երկու սենյականոց փոքրիկ բնակարանում: Ես տառապում էի ստամոքսի հիվանդությամբ: Ինքը՝ նոյնականացնառողջ, հաճախ, երբ տուն էր հրավիրում, ասում էր.

- Գնանք մեր տուն, միասին կծաշենք, գիտեմ՝ տիկին Արուսը հավի բուլյոնից (մասարից) կերակուր է պատրաստել երկուսիս համար, հա՛, հա՛, երկուսիս համար, նա գիտե, որ ստամոքսի հիվանդություն ունես, ես՝ նոյնական, դրա համար երկուսիս հարմար կերակուր է պատրաստել:

Չէի մերժում, գնում էի, բայց մի տեսակ ամաչելով, անհարմար զգալով: Արուսը մեզ ընդունում էր ուրախությամբ, ժպիտով, ջերմ խոսքերով ու այնպիսի մթնոլորտ էր ստեղծում, որ իրենցից մեկն էի կարծում ինձ: Դամեստ, քախոս, բարի կին է Բագրատի տիկինը: Եվ որքան երկարեց մեր բարեկամությունը, ես հասկացա, որ Բագրատը կյանքի իսկական ուղեկից ունի: Դասկացա նաև, որ Արուսը շատ է նվիրված անուսնուն: Դա երևում էր նրա վերաբերնունքից...

Տեսագայում Բագրատ Ուլուբարյանը սեփական տուն կառուցեց Ստեփանակերտում, որ կամաց-կամաց դարձավ յուրատեսակ «վերնատուն»: Փոքրիկ տնամերձը Բագրատն այդի դարձեց, ծիրանի, թթի ծառեր տնկեց, Արշակ քեռու պես ծառերի տակ գինու կարասներ դրեց, գիտեր, որ շատ հյուրեր պիտի լինեն այս տանը: Այդպես էլ եղավ: Բաքվից, երևանից արվեստի, գրականության մարդիկ էին գալիս և անպայման հյուրընկալիում էին Բագրատի տանը՝ Վահրամ Փափազյան, Սուրեն Քոչարյան, Յանշայան, Պաղապահ և այլք: Այդպիսի միջավայր ու մթնոլորտ, ուր գրող, ստեղծագործող մարդը չի կարող ոչ միայն գոհ չլինել, այլ նաև՝ երջանիկ:



Բագրատ Ուլուբարյանը՝ տիկինոց հետ Նրանց շատ են զարմացրել տիկին Արուսի ազնվական պահվածքը, անմիջականությունը, հատկապես նրա համեստությունը: Հիշում են՝ Սուրեն Այվազյանը, որ գրեթե ամեն տարի լինում էր Արցախում, միշտ այցելում էր Բագրատի «վերնատուն» և ամեն անգամ զարմացած ասում:

- Բագրատը հաջողակ մարդ է: Կնոջ հարցում նոյնական բախտը բերել է: Հանգված են՝ նրա տիկնոց եներկայությունն այս տանն ստեղծում է այնպիսի միջավայր ու մթնոլորտ, ուր գրող, ստեղծագործող մարդը չի կարող ոչ միայն գոհ չլինել, այլ նաև՝ երջանիկ:

Տիկին Արուսյակը մաքենատիկայի հրաշալի դասասուուր էր, բայց տանն ամենից առաջ տանտիրուի էր: Տան ամբողջ հոգւերն իր ուսերին (նաև՝ երեք երեխաների հոգաք), հեշտ չէր, նոյնիսկ ծանր էր, բայց չէր տրտնջում, դժկանություն չէր ցուցաբերում: Բագրատը կարողանում էր գոնե տունը պահել անկարիք, բարեկեցիկ:

Ին սիրելի ընկեր Բագրատն ուներ մի ոչ սիրելի սովորություն: Նա կարող էր (և այդպես էլ անում էր), հանկարծ իր հետ հյուր կամ հյուրեր կրերեր՝ առանց նախօրոր տիկնոցն զգուշացնելու: Նախանդապերում ես նրան հանդինանում էի, իսկ նա ծիծաղում էր և ասում.

- Բողդան, սիրելիս, իմ սովորությունը վաղուց է հայտնի սիրելի տիկնոցս, դրա համար նա ամեն ինչ անում է, որ հանկարծակի չօք: Դրանում ես համոզվել եմ մի քանի անգամ:

Հիշում եմ գիշերվա ուշ ժամ էր, երբ Ստեփանակերտում հայտնվել էր Պարույր Սևակը՝ մի քանի ընկերների հետ: Լուր են տալս Բագրատին, նա էլ՝ ինձ: Ուշ գիշեր էր: Գնում ենք, գտնում Պարույրին մի քանի անձանոր ընկերների հետ և միասին գալիս Բագրատի տուն: Տիկին Արուսն արդեն ոսթի վրա էր. սեղան էր պատրաստում. սեղանի կենտրոնում, զանազան ուտելիքների հարևանությամբ, քազմել էին խմիչքի շշերը, որոնց մեջ կայծկլում էր արցախյան թթի օղին և Գիշու հայտնի գինին: Սևակում է հյուրասիրությունը: Երևում է՝ հյուրերը կարգին սոված էին և լավ է կերան, խմեցին: Պարույրն առաջինը խնում է տաճտիրուհու կենացը և այնպես բնութագրում տիկին Արուսին, ասես նրան վաղուց էր ճանաչում:

Ի դեպ, ասեմ, որ միշտ էլ այդպես է եղել: Բագրատի հյուրերը, մինչև նրա կենացը խնելը, խնում էին տիկնոց կենացը: Խոսք նրանք հայտնի մարդիկ էին՝ Սորուս Շասրության, Շամոն Սահյան, Սարգիս Արքահամյան, Նաիրի Զարյան, Գարեգին Սևունց, Շրայչա Քոչար... Բոլորին չես թվարկի:

Բագրատ Ուլուբարյանի նորակառույց տունը շատ մեծ դեր ու նշանակություն պիտի ունենար Արցախի մշակութային կյանքում, եթե չպայթեր մի աղետ, որը միշտ էլ սպասելի էր: Արհասարակ այն օրվանից, ինչ Արցախս նետել էին աղբբեջանցիների գիրքը, չէ, ինչ գիրքը, այլ ճանքը, այստեղ էլ հայկական այս հնավանդ հողում, հայկործան աղետները միշտ էլ անպակաս էին...

1960-ական թվականներն էին, խորոշովան հալոցքի տարիները: Արցախյան շարժումը դրւու էր եկել իր հին կաշկանդումից և սկսել ալեկոծվել, ափնակոծել: Ստեփանակերտում ցուցարարները շրջապատել էին կուսանարգկոմի շենքը և բողոքում էին աղբբեջանցի իշխանավորների կամայականության, հայահալած քաղաքականության, ազգային խորականությունների դեմ: Նրանց ձայնն ուղղակի որոտում էր՝ Կոմիտաս ենք ուզում լսել, հոգնել ենք խան Շուշինսկու մուղաներից, մենք հայ ենք, հայ և հայ մնալ ենք ուզում մեր հողի վրա...

Բագրատ Ուլուբարյանն իսկույն հայտնվեց շարժման առջևում՝ մի շարք առաջավոր մարդկանց խմբով: Նրանք տարբեր պաշտոններ ունեին,

բայց դրանոներ չեն: Նամակ գրեցին, նամակում պատմեցին այն հակահայկական չարիքների մասին, որ կատարվում էին Արցախի հայկական մարզում և ուղարկեցին Մոսկվա: Նամակի տակ ստորագրել էր տասներեք հոգի: Նամակը գրել էր ինքը՝ Բագրատը, և ինքն էլ տարավ Մոսկվա: Նամակի վերջում գրված է արցախահայությունը կարող է փրկվել, միայն եթե Արցախը վերադարձի մայր Յայստանին իր օրինական տիրոջը:



**Զախիս աջ՝ Բագրատ Ուլուբարյան, Արշալույս Դարբնի, Բողդան Զանյան**

Գրվածին վերևում ուշադրություն չդարձրին: Մատները դրին նամակի վերջին՝ եզրափակիչ տողին և ասացին՝ հեղինակները նացինալիստներ են: Ասացին ու գործի անցան: Աղբբեջանցիները դրան էին սպասում: Նոր հալածանքներ, նույնիսկ սպասություններ սկսեցին Արցախում, իսկ այդ տաճտիրեք հոգուն պատժեցին, աշխատանքից հանեցին: Խմբից մի քա-

## «Երբ Երևանում մարդու եմ կարոտում, գալիս եմ այստեղ, որ մարդ տեսնեմ, Բագրատին ու նրա տիկնոջը տեսնեմ»: Շամոն Սահյան

Նի հոգի՝ Բագրատ Ուլուբարյանը, Սերգեյ Շաքարյանը, Գրիշա Ստեփանյանը, Արևադի Մանուչարյանը և ես եկանք Սովետական Յայստան:

Այստեղ մեզ լավ ընդունեցին, բոլորիս էլ աշխատանք ու բնակարան տվին: Ձերմ էր Յայստանի այդ ժամանակավա դեկավարության վերաբերմունքը հատկապես Բագրատի նկատմամբ, ջերմ էր և, այնուամենամեջ զգույշ, որովհետև հարևան հանրեցող տիկին Արուսն էր: Զեռագիր վիճակում ինքն է ընթերցել դրանք և մերե-

Ուլուբարյանը Երևանում արդեն բնակարան ուներ, բայց Եղվարդում տուն կառուցեց, ստեղծեց տուն ու այգի, հողը դարձրեց արցախյան և շուտով իր հայրենի տան ավանդույթները տեղափոխեց նոր տուն, նոր այգի: Եկ սկսվեց նոյենը՝ այցելություններ, հյուրեր՝ Երևանից, Արցախից, Մոսկա-յից...

Այստեղ էր լինում և այն էլ հաճախ՝ Շամոն Սահյանը: «Երբ Երևանում մարդու եմ կարոտում, գալիս եմ այստեղ,

նագրել: Զարմանում էր՝ տեսնելով այս ամենը. ինչպես էր հասցնում կատարել այդ բոլորը, ինչպես էր այս փխուս կինը դիմանում այդ ծանրությանը: Երկի դա այն մեջ սերն էր, որ ուներ և ունի իր ամուսնու ու նրա արած-թռղածի նկատմամբ, նաև օրինավոր, օրինակելի ընտանիք ունենալու սերը, ձգուումը:

\*\*

**Ա**հա նորից գրիչս չի ուզում շարժվել, դիմադրում է: Դիմադրում է, որովհետև երանավետ ժա-

**Բագրատի տունը միայն տուն չէր, այլ սրբազն, նվիրական մի վայր: Լինել այնտեղ՝ նշանակում էր հաղորդակցվել բարությանը, սրտաբացությանը, այն ամենին, ինչով մարդ մարդ է:**

մանակներից պիտի մտնեք մի ժամանակի մեջ, որի բերածն աղետն է, ողբերգություն: Բագրատ Ուլուբարյանը սրտի լուրջ իհվանդություն ուներ: Բայց իրեն չէր խնայում. շարունակում էր գրել ու գրել: Ասելիք շատ ուներ, անելիք՝ նույնպես: Շտապում էր...

Ու եկավ մի օր, որ ամենողին մտավ և այլս չկարողացավ ոչ անկողնուց դուրս գալ, ոչ էլ մոտենալ սեղանին: Տառապում էր նաև տիկին Արուսը. շարունակ նստած էր իհվանդ ամուսնու անկողնու մոտ՝ ամեն կերպ փորձելով թերևացնել նրա ցավերը: Երեք տարի մնաց ամենողնում, երեք սովորակի տարիներ... Տանջանքներն անցնում էին ամենից առաջ տիկին Արուսի սրտի միջով...

Նա մենակ էր տեսնում ամուսնու ցավը: Բայց ինչ լավ է, որ կար մեկը աղջիկը՝ նվարդը, որ օգնում էր նրան, երևանից դեղեր էր բերում, գալիս-

գնում էր: Մնալ չեր կարող. ընտանիք ուներ, երկու դպրոցահասակ զավակ և իհվանդ ամուսին: Նրա հոգսերը նոյնապես շատ քիչ էին: Տիկին Արուսն այդ մասին էլ էր մտածում, աշխատում էր, որ Նվարդին նեղություն քիչ տա: Մտածում էր ու մնում մենակ: Եվ գրեթե այդպես էլ մենակ ամուսնու հետ պայքարում էր մոտեցող ողբերգության դեմ:

Թող ընթերցողը չմտածի, թե Բագրատ Ուլուբարյանը, երբ իհվանդ էր, ծանր վիճակում, կատարյալ մենության, լրվածության մեջ էր և կողդին, բացի տիկնոջից՝ ոչ ոք չեր լինում: Լինում էին, այն էլ բավականաչափ շատ: Բագրատին սիրողներն այնքան շատ էին... Այցելում էին նրա բոլոր մտերինները: Գալիս էին նույնիսկ նրանք, ովքեր Բագրատին չեին տեսել, բայց լսել էին նրա փառապանծ անունն ու նրա ազգային, փառահետ գործունեության մասին, ովքեր կարդացել էին նրա գեղարվեստական ստեղծագործությունները, Արցախի, առհասարակ Հայաստանի պատմությանը վերաբերող գրքերն ու պատմությունները և սիրել էին նրան հեռվից: Գալիս էին տեսության, գալիս էին ամոքելու, հուսարդելու մեջ հայրենասերին, գրչի հազվագյուտ մարդուն: Էլ չենք խոսում նրա զավակների, հարազատների մասին, որոնց աչքերում Բագրատի վիճակն արցունք էր դրել...

Ավարտվել են Բագրատի տառապանքները: Բայց իհմա, երբ տանտերը չկա, չկան, չեն գալիս նրա ընկերները, մտերիմները, դադարել է ամենօրյա այցելուների հոսքը:

Ուլուբարյանը Եղվարդի իր այգում երկու տուն է կառուցել՝ իր երկու տղաների՝ Արթուրի և Յայրի համար: Մեկի դուրս փակ է, մյուսինը բաց ու խուլի է անում տիկին Արուսը: Նա ապրում է սգավոր մենության և լրության մեջ: Ապրում է մենակ՝ նշանավոր ամուսնու հետ ապրած, այսօր արդեն ցավ ու տրտմություն պատճառող հուշերի հետ: Զարմանում են (զարմանում են նաև ուրիշները), թե ո՞նց է նա դիմա-

նում այդ ծանր մենությանը...

- Ի՞նչ մենություն, ի՞նչ մենակ, ասում է նա մի քիչ վիրավորված: - Ես երբեք մենակ չեմ լինում: Բագրատի շումն ու շնչառությունը զգում եմ եւ տան պատերից, նրա ձեռագրերից, որոնցից երբեք չեմ բաժանվում, հատկապես՝ գիշերը: Վառում եմ նրա աշխատասենյակի լույսը, այդ ձեռագրերը դնում գրասեղամին: Դրանք բոլորն ինձ ծանր են. ժամանակին մեքենագրել եմ, բայց իհմա կարծես նոր եմ տեսնում, կարդում եմ, դարսդարսում, կամոնավորում, կարդում նորից ու նորից և թվում է՝ լսում եմ Բագրատի ձայնը, զգում նրա շնչառությունը: Քանի ես կամ, այստեղ է Բագրատը, այստեղ է նրա ներկայությունը: Մենակ ես չեմ, ամբողջ այգու տարածքն է դա զգում, որի վրա նրա հետքերն են, նրա տնկած ծառերը, որոնք ինձ համար Բագրատի կերպարներն են...

չեմ, ամբողջ այգու տարածքն է դա զգում, որի վրա նրա հետքերն են, նրա տնկած ծառերն են, որոնք ինձ համար Բագրատի կերպարներն են...

Ապրում է այսպես Բագրատի այրին տիկին Արուսը: Ապրում է, պահում է, խնամում է այգին, պահում է Բագրատի կրակն ու լույսը: Ապրում է, քայլում Բագրատի հետքերով այգու, տան լրության մեջ, մենության մեջ, սկսրի մեջ: Ենրանակը միայն գլխին է: Այդ ճերմակին նայելիս թվում է մի կտոր ամպ է շաղմուն այստեղ և թափիծ մաղում Բագրատի հետքերին, ծառերին ու տանը...


**Բոգրամ Զամյան**

## **Հ Ա Ր Ի Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ծ**

- Բեյրութի «Կ. Տօնիկեան եւ որդիք» հրատարակությունից (տնօրեն՝ Յակոբ Տօնիկյան) շնորհակալությամբ ստացանք հաստատության իհմնադիր և առաջին տնօրեն Կիրակոս Տօնիկյանի «Կեանքիս Ցուշեր» հուշագրությունը (նույն հրատարակության տպագրություն), Բեյրութ, 2004, 135 էջ (Ա-4):

- Յաշօն (Յաշյա Մաթևոսյան) «Շրջադարձի» շնորհակալեան նվիրեց իր պատմվածքների վերջին երկու՝ «Պինդ կացեք» և «Սիրով» ժողովածուները՝ երկար ու հարուստ ճանապարհի բարեմաղթանքով:

# Նոր հրատարակություններ



■ «Հեռուստատեսային ժուռնալիստիկա», դասագիրք: Երևանի պետհամալսարանի հրատարակչություն, 2003, 391 էջ (A-5): Տպագրվել է ԱՄՆ պետդեպարտամենտի դրամաշնորհիվ՝ «Երևանի ազատ ձայն» ծրագրի շրջանակներում:

Դիտարկվում են հեռուստատեսության բնույթը ու հասարակական գործառույթները, տեղն ու դերը ՁԱՄ-ների համակարգում, արտերկրի հեռուստաժուռնալիստիկայի պատմությունը և այլ հարցեր:

Թարգմանել են Լիանա Սայադյանը և Նաղաջ Մարտիրոսյանը: Խմբագրել է ԵՊԴ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Գառնիկ Անանյանը:


■ «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր): Պրակ Դ, Ե, Զ: Երևանի պետհամալսարանի հրատարակչություն, 2003թ.: Պրակների հրատարակությունը երաշխավորել է ԵՊԴ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհուրդը, խմբագիր՝ ֆակուլտետի դեկան՝ Գառնիկ Անանյան:

Պրակ Դ, 2003թ., 252 էջ (A-5): Ընդգրկում է ԵՊԴ ժուռնալիստիկայի ֆակուլտետի և Միդլեքս համայնքային քոլեջի (ԱՄՆ) 2002թ. հունիսին համատեղ կազմակերպած «ժուռնալիստիկան Հայաստանում. արդի հիմնախնդիրներ և խոչընդունելիություն» միջազգային գիտաժողովի գեկուցումները:

Պրակ Ե, 2003թ., 242 էջ (A-5): Ընդգրկում է ԵՊԴ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մանուլի պատմության ու տեսության և օպերիկեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնների, ինչպես նաև նույն ֆակուլտետի մագիստրատորայի համար Երևանի մանուլի ակումբի կազմած ծրագրերը:

Պրակ Զ, 2003թ., 152 էջ (A-5): Ընդգրկում է ԵՊԴ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոսների, ասպիրանտների և հայցորդների աշխատանքները: Տպագրվել է ԵՊԴ տպարանի մեկենասությամբ:

Դ և Զ պրակները հրատարակվել են ԱՄՆ պետդեպարտամենտի հատկացրած դրամաշնորհներով՝ «Երևանի ազատ ձայն» ծրագրի սահմաններում:



■ Նիկոլ Աղբայան, «Լամակներ, պաշտոնական գրություններ»: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2003թ., 276 էջ (A-5):

Ժողովածուն ամփոփում է Երևանի, Բուստոնի, Բեյրութի արխիվներից և մասնավոր անձանցից հավաքած 151 նամակ, 79 պաշտոնական գրություն, որոնք նորովի են բացահայտում գրականագետի և հասարակական-քաղաքական գործչի գործունեությունը: Ժողովածուն կազմել, նախարանը գրել և ծանոթագրել է բանասիրական գիտությունների գործունեությունը:

Ժողովածուն երի դոկտոր Գառնիկ Անանյանը: Յրատարակվել է պետական պատվերով:

■ Գրիգոր Արծրունի, «Լրագրության մասին»: Երևան, «Ուկան Երևանցի» հրատարակչություն, 2003թ., 366 էջ (A-5):

Գրքում ժողովված են «Մշակի» հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունու հոդվածները, հիմնականում առաջնորդողները՝ լրագրության տեսության և պատմության վերաբերյալ: Ժողովածուն կազմել և խմբագրել է բանասիրական գիտությունների դոկտոր Գառնիկ Անանյանը: Տպագրվել է ԱՄՆ պետդեպարտամենտի դրամաշնորհիվ՝ «Երևանի ազատ ձայն» ծրագրի շրջանակներում:

■ «Օնլայն ժուռնալիստիկա», դասագիրք: Երևան, «Ուկան Երևանցի» հրատարակչություն, 2003թ., 200 էջ (A-4):

Ուսումնական ձեռնարկում քննության են առնվել ժուռնալիստիկայի ասպարեզում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, մասնավորապես՝ ձևավորվող նոր՝ օնլայն ժուռնալիստիկայի տեսական և գործնական խնդիրները: Թարգմանել են Լուսինե Անանյանը և Կրամ Մկրտչյանը, խմբագիր՝ Գառնիկ Անանյան: Տպագրվել է ԱՄՆ պետդեպարտամենտի դրամաշնորհիվ՝ «Երևանի ազատ ձայն» ծրագրի շրջանակներում:



■ Ուուզան Ասատրյան, «Շուշի», վիպերգ: Երևան, «Ամարաս» հրատարակչություն, 2003թ., 56 էջ (A-5):


«Շուշի» մեր օրերի ազգային-պատառական պայքարի հերոսապատումն է, մեր հայրենիքի հավերժության համար ապրող և նաքառող Հայոց ոգու ներբողը: Այն կարևոր է հայրենասիրական դաստիարակության, մեր ազգային նվիրումները արժանավույն զնահատելու, Երկիր մոլորակի վրա մեր տեսակը արժանապատվորեն պահպանելու համար:

Գրքույթը ներառում է նաև հեղինակին ուղղված խոսքեր և նրա համառոտ կենսագրությունը:

■ Զվարթ Գալստյան-Գևորգյան, «Մենք»: Երևան, ՅԳՄ հրատարակչություն, 182 էջ (A-5):

Ժողովածուն պատրաստվել է Նյու Յորքում: Այն հատկապես արտացոլվում է 1988թ. ազգային վերազարդողը («Արցախ» փաստագրական տեսաժապավենի սցենար):

Պարհիկոմպողիցիաները, որ գրվել են ավելի վաղ, ինչել են Նյու Յորքի հայկական ռադիոժամով: Գրքում ամփոփված են նաև հե-



դիմակի հողվածները, որոնք կոչ են արտերկրի հայության՝ ձեռք մեկնել ՀՀ և ԼՂՀ իրենց հայրենակիցներին:



- Գաղնիկ Անանյան, «Հանուն և ընդդեմ գլոբալիզացիայի»: Երևան, 2003թ., 184 էջ, չափսը՝ 16,5 սմ x 13 սմ:

Գրքում ամփոփված են հեղինակի վերջին տարիներին գրած «Հանուն և ընդդեմ գլոբալիզացիայի», «Հովհաննես Թումանյանի հրապարակախոսությունը», «Քարոզությունից դեպի տեղեկատվություն» հրապարակախոսական հողվածները և միջնադարին նվիրված ուսումնասիրությունները՝ «Համաքրիստոնեական համահայկական պահպանության նախապայման» և «Աղանդավորության խնդիրները V դարուն»: Արձարժված թեմաներն ունեն արդիական հնչողություն:

- ՍամՎել Իսկանդարյան, «Արի կարդամ երգերս», բանաստեղծություններ: Երևան, «Նոյյան տապան» տպագրատուն, 2004, 56 էջ (5.5 սմ x 4 սմ):

Բանասիրական գիտությունների թեկնածու հեղինակի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն է, որտեղ իր խոհերն ու մտորուններն են բաժանում ընթերցողի հետ՝ կյանքի մնայուն և անցողի արժեքների շուրջ:

Գրքումկը հրատարակել է «Գլածոր» կառավարման համալսարանի հովանավորությամբ:



- Մարիամ Մարգարյան, «Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր»: Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, 2004, 264 էջ (Ա-5):

Վերլուծված են գլոբալ քաղաքակրթության կառուցվածքում տեղի ունեցող արժեքային կերպափոխությունների և ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հայ քաղաքական իրականության արդիականացման խնդիրները:

Տպագրության է երաշխավորել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտխորհուրդը:

Գիրքը կարելի է ձեռք բերել «Բուկինիստ» ՍՊԸ գրախանություն (Երևան, Մաշտոցի պող. 20, հեռ.՝ 53-74-13):

- - «Ավստրո-Հունգարիայի դիմագործությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918թթ.)», փաստաթթերի ժողովածու: Երևան, «Նահապետ» հրատարակչություն, 130 էջ (Ա-5):

Ժողովածուն կազմել և առաջարանը գրել է ավստրիայի պատմաբան, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Արտեմ Օհանջանյանը: Տարիների ուսումնասիրության արդյունքում նա ի մի է բերել Ավստրիայի պետական արխիվներում պահվող ավստրո-հունգա-

ռական դիմագործությունների, իյուպատոսների, պետական բարձրաստիճան անձանց շուրջ 3300 էջ կազմող գեկուցագրեր՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին: Դրանց մի մասն առաջին անգամ է ներկայացվում հայ հասարակայնությանը:

Ժողովածուն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գիտխորհուրդի որոշմամբ՝ «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը» մատենաշարով (թիվ 3): Գերմաններնից թարգմանել է Վարչական Մարտիրոսյանը:

Գիրքը կարելի է ձեռք բերել Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գրախանություն: Զանգահարել 39-09-81 հեռախոսահամարով:

- Շահե Տեր-Գևորգյան, «Հայատանի և Սիրիայի վաղ քրիստոնեական ճարտարապետության առնչությունները» (արար.): Հալեպ, «Արևելք» տպարան, 2002, 304 էջ, չափսը՝ 24 սմ x 16 սմ:

Սիրիահայ վաղամեթիկ ճարտարապետ, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի շրջանավարտ Շահե Տեր-Գևորգյանի (1944-1998) թեկնածուական ատենախոսությունն է, գիտական հայտնագործություններով հարուստ կոթողային մի աշխատություն:

Գիրքը հարուստ է լուսանկարներով, ճարտարապետական հատակագծերով ու գծապատճերներով:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության 2000թ. լույս ընծայած աշխատությունը արաբերենի է փոխադրել բժիշկ Ալեքսանդր Քեշիշյանը: Հայաստանում քրիստոնեալ պետական կրոն հոչակնան 1700-ամյակին նվիրված ուսումնասիրության բարգմաննությունն իրագործվել ու հրատարակել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության միջնություն:



- Արամ Տեր-Ղևոնդյան, «Արաբական իշխանությունները Բագրատումյաց Հայաստանում» (արար.): Հալեպ, «Արևելք» տպարան, 2003, 224 էջ (Ա-4):

Հայ նշանավոր արևելագետ, Եգիպտոսից հայրենադարձական Արամ Տեր-Ղևոնդյանի (1928-1995) մենագրությունը միջնադարի հայ-արաբական հարաբերությունների, մասնավորաբար 8-10-րդ դարերի քաղաքական առնչությունների մասին է:

Թարգմանել է հայեապահ բժիշկ, Արար Գրողների միության անդամ Ալեքսանդր Քեշիշյանը: Լույս է տեսել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության միջնություն:

- Ժանետ Լազարյան, «Իրանահայերի հանրագիտարան» (պարսկ.): Թեհրան, «Հերմենդ» հրատարակչություն, 2003, 528 էջ (Ա-4):

Այս հրատարակության մեջ ներկայացվում են իրանահայ Երևելի հայության պատմությունը՝ մեջիսի պատգամավորներ, պետական ծառայողներ, ինժեներներ, արդյունաբերողներ, արվեստի գործիչներ, հոգևորականներ: Ավարտին կա անձնանումների ցանկ: Հատուրը հարուստ է լուսանկարներով:




■ Մայդա Սարիս, «Հայկական գեղանկարչական արվեստը հնագույն ժամանակներից մինչ օրս» (թուրք.): Ստամբուլ, «Ակոս» շաբաթաթերթի տպարան, 262 էջ, չափս՝ 32 սմ x 24 սմ:

